

14-15(552-553)

11.05.2019

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարով

# ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ, ՈՐ ԴԵՌ ԿԼԻՆԵՆ

Անապագա է այն ազգը, ով իր պետական տոնացույցում չունի Հաղթանակի տոն: Պատերազմները, ցավոք, անցանկալի ուղեկից են ժողովուրդների կյանքում, հատկապես նրանց համար, ովքեր ճակատագրի կամոք շրջապատված են իրենց նկատմամբ մշտապես թշնամաբար տրամադրված դրացիներով: Եվ եթե պատերազմներն անխուսափելի են, ապա հաղթանակները պետք է լինեն պարտադիր, այլապես ազգը չի կարող գոյատևել պարտություններով:

Հայ ժողովուրդը ոչ իր նախընտրությամբ գտնվում է մի այնպիսի տարածաշրջանում, որտեղ հարյուրամյակներ շարունակ թուրքի գազանային բնազդը ահազանցող սպառնալիք է եղել իր համար: Նման պայմաններում խաղաղ շինարարությամբ գոյատևելն անհնար է, պետք է նաև վառողհամաճուրդ չոր պահել վառողը, իսկ հարկ եղած դեպքում՝ արժանի հակահարված տալ ոտնձգություն անող ագրեսորին:

Արցախյան գոյապայքարն այդ առումով հրաշալի դասեր է տվել. մենք վերջապես կարողացանք ջարդել այն կարծրատիպը, ըստ որի՝ ունակ ենք միայն ինքնապաշտպանվելու: Շուշիի, հետագայում նաև մյուս հայապատկան տարածքների ազատագրումն ավելի ամրապնդեց սեփական ուժերին ապավինելու մեր վստահությունը:

Շուշին հաջողված մեկնարկ էր, և հին բերդաքաղաքի ազատագրումն իրավամբ դարձավ հաղթանակների խորհրդանիշ: Ավելին, այն եռատոն է իր պատմական նշանակությամբ, որովհետև Մայիսի 9-ը ներառում է նաև Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի բերկրանքն ու Արցախի փառապանծ պաշտպանության բանակի ստեղծման հպարտությունը:

Մայիսի 9-ը մի պատգամ էլ ունի՝ այն համախմբում ու ոգեշնչում է բոլոր հայերիս՝ մեծ թե մանուկ: Շուշի ասելով հասկանում ենք Կարս ու Վան, Սասուն ու Մուշ, որտեղ, հուսանք, դեռ պիտի վրեժխնդրորեն շողա սասունցի դավթյան թուր Կեծակին: Յուրաքանչյուր հայ, աշխարհի որ ծագերում էլ ապրելիս լինի նա, չմարող հավատով է սպասում շուշիածին նոր հաղթանակներին. հաղթանակներ, որ դեռ կլինեն..

Ուրեմն, մեկնելու ասենք խնդասիրտ՝ շնորհավոր եռատոն: Թող հայոց խաղաղ երկինքն այսուհետև ճեղքեն միայն տոնական հրավառության ցուլերը՝ ուրախ ցուլցալով ամեն մի հայի երջանկաժպիտ աչքերում:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

## ԵՌԱՏՈՆԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Վահագն ԴԱՎԹՅԱՆ

### ԵՌԱԳՈՒՅՆԸ ՀՈՒՇՎԱԿ ԲԵՐԴԻՆ



Եվ չտեսան, և չտեսան նրանց աչքերն արնոտ ու կոյր, Որ դու, Արցախ, ոչ թե մի բուռ, այլ բռունցք ես պղնձակուռ: Եվ չտեսան, և չտեսան, որ Դեր-Ձորից այն հեռավոր, Պատռած պատանքն իր ավազե, ելավ մանուկ մի թևավոր, Ելավ մանուկ մի հրաշյա, չքնաղ՝ նման հրեշտակի, Որ իր փոքրիկ բռունցքներով նախ երկնքի դուռը թակի, Ապա մաքուր իր ձեռքերով առած նշխարն արդարության, Իջնի Արցախ շրթունքներին երզը ոխի ու հարության. - Թրքաց մայրեր թող լան, ու դուն Ուրախ լուրեր տար ի Ձեյթուն...

Եվ չտեսան, և չտեսան, որ դարձած լույս, դարձած ոգի, Նորից Նժդեհն է արշավում՝ նման մի նոր Սուրբ Գևորգի, Որ բողբոջի Սունգայիթի ելնում աղջիկ մի սիրասուն, Ելնում փխրուն ու բարախիկ, բայց և ահեղ, որպես ցասում, Որ ելնում են ամեն կողմից ֆիդայիներն այս ոգեղեն, Դառնում անտես մի գորագունդ, թշնամու դեմ դառնում գեղեն: Եվ եռագույնն են ծածանում մեր հինավուրց Շուշվա բերդին, Վրեժի շանթն աչքերի մեջ, վրեժի երզն իրենց շուրթին. - Թրքաց մայրեր թող լան, ու դուն Ուրախ լուրեր տար ի Ձեյթուն...

Ներքե, տղերք, ձեզ բոլորիդ ես չգիտեմ անուն-անուն, Բայց շուրթերիս ամեն մեկիդ փառքի երզն է հասունանում, Լոկ թեզ գիտեմ, քեզ քաջ Մոնթե, սակայն գիտեմ, իբրև լեզենդ, Գիտեմ, որ դու խոնարհ ու հեզ, բայց կռվի մեջ կրակ ես խենթ: Եվ քեզ գիտեմ, քաջ Անդրանիկ, մաքրամաքուր դու լույսի սյուն, Դու անմարմին, որպես Հիսուս և Էպոսի նոր դյուցազուն. Երդունի պես Ձեր շուրթերին հնչեց նորից երզն առնացի, Որ երզն է սուրբ մեր քարեղեն ու ոգեղեն առեղծվածի, - Թրքաց մայրեր թող լան, ու դուն - Ուրախ լուրեր տար ի Ձեյթուն...

Փառք քեզ Հայոց անմահ ոգի, փառք հառնումին քո հիասքանչ, Դու լույսի սերմ, ցայգածաղիկ, լեռան աղբյուր ու հողի կանչ, Օիրանի ծառ դու ծաղկավոր ու շեկ ժայռից բխած գիհի, Երկինք միտող տաճար ու վանք և խորություն անհուն վիհի, Համբերություն որձաքարի և կայծակի դու շառաչյուն, Դու նորածին հուրերը մանուկ և հերոսի դեռ տաք աճյուն, Եվ քանի դեռ սուր են խրում քո սրտի մեջ ու քո վերքի, Քո շուրթերին թող չլռի վրիժառու տողն այս երգի

- Թրքաց մայրեր թող լան, ու դուն  
- Ուրախ լուրեր տար ի Ձեյթուն...

1992թ. մայիսի 9

## ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԱՄԻՍ ՄԱՅԻՆ

Մայիսը հայոց պատմության ամենապայծառ էջերից է: Ծակատագրի բերումով մեր կարևոր հաղթանակները եղել են մայիսին, որոնցից յուրաքանչյուրը մեր ազգի համար նոր ժամանակաշրջան է նախանշել:

Ավարայրը ցույց տվեց, որ մենք կարող ենք փոքրաթիվ լինելով հանդերձ կանգնել ու պատերազմ մղել հակառակորդի դեմ և պաշտպանել մեր հավատն ու լեզուն: Սարդարապատը մեր հերոսամարտն է, որի ժամանակ մեր ժողովուրդը կարողացավ զենքի ուժով պաշտպանել իր անկախությունը, ստեղծել պետականություն:

Մեծ է հայ ժողովրդի ավանդը Մեծ Հայրենական ժամանակ: Միայն Ղարաբաղից այդ պատերազմին մասնակցել է ավելի քան 50 հազար մարդ, 26 հազարը զոհվել է հայրենիքից հազարավոր կիլոմետրեր հեռու: 21 հոգի արժանացել է ԽՍՀՄ հերոսի կոչման: 70 հազար հայ մարտիկներ պարգևատրվել են մարտական շքանշաններով և մեդալներով, 107 հոգի արժանացել է հորհրդային Միության հերոսի կոչման, որոնցից շուշեցի Նելսոն Ստեփանյանը՝ կրկնակի: Հայ ժողովուրդը Մեծ Հայրենական տարիներին տվել է

չատ զորապետներ, ռազմական գործիչներ, գեներալներ և մարշալներ՝ Հովհաննես Բաղրամյան, Համազասպ Բաբաջանյան, Սերգեյ Խուդյակով (Արմենակ Խանփեդյան), Սերգեյ Աղանով, ծովակալ Հովհաննես Իսակով և ուրիշներ: 1945թ. մայիսի 9-ի հաղթանակը մեզ համար կրկնակի հրատապ էր. չէ՞ որ Գերմանիայի հաջողության դեպքում թուրքիան՝ որպես այդ երկրի դաշնակից, պատրաստ էր ներխուժել Անդրկովկաս և դրանով իսկ վերջնականապես լուծել Հայկական հարցը: Այսօր մենք մեծ երախտագիտությամբ ենք հիշում բոլոր նրանց՝ մեր հայրերին ու պապերին, որոնք բարձր են պահել հայ ժողովրդի պատիվը Մեծ Հայրենականում:

Մայիսը թանկ ու հիշարժան է մեզմիջ յուրաքանչյուրի համար, քանի որ 27 տարի առաջ այդ օրն ազատագրվեց հայոց հինավուրց բերդաքաղաք Շուշին, որը և սկիզբը հանդիսացավ մեր հետագա հաղթանակների: 1992թ. մայիսի 9-ը եղել է Արցախի անկախության փարոս հայ ժողովրդի համար: Շուշիի ազատագրման ռազմագործողության մշակումն ու իրագործումը հանդիսացավ հայ ժողովրդի ռազմական մտքի փայլուն

հաղթանակը: Այն իր արժանի տեղը գտավ հայ ազգային-ազատագրական շարժման նոր փուլում: Շուշիի ազատագրումը նպաստեց մեր ժողովրդի մարտական ոգու բարձրացմանը: Վերջնականապես համոզվեցինք, որ կարևորը թվաքանակը չէ, և որ պետք է առաջին հերթին ապավինել սեփական ուժին:

Մայիսի 9-ի միասնական տոնի մյուս մեծագույն արժեքը Պաշտպանության բանակի կազմավորումն է: 27 տարին պատմության համատեքստում երկար ժամանակահատված չէ. աշխարհի հզորների շարքին դասվող տասնյակ երկրներ երբեմն անցել են ավելի երկար ճանապարհ իրենց բանակը պատշաճ մակարդակի հասցնելու համար: Իր կարճատև պատմության մեջ անցնելով թե՛ պատերազմի և թե՛ բանակաշինության ծանրագույն փորձություններով՝ մեր բանակը կոփվեց և դարձավ մեր անկախ պետականության կարևորագույն երաշխիքը, հայ ժողովրդի հպարտության և ոգևորության աղբյուրը:

ԵՈՒՍՆ

ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ ՎԱՐԵՅ՝ ԴԱՇՏԴԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ



Գեներալ-մայոր Կ. Աբրահամյանն իր դասախոսության ընթացքում անդրադարձավ հայ ժողովրդի կյանքում բախտորոշ նշանակություն ունեցած մայիսյան հաղթանակներին. 451թ.՝ Ավարայր, 1918թ.՝ Սարդարապատ, Հայաստանի առաջին հանրապետության հռչակում, 1945թ. մայիսի 9՝ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակ, 1992թ.՝ հայոց հինավուրց Շուշիի ազատագրում և Պաշտպանության բանակի կազմավորում: Այդ բոլոր հաղթանակներն ազգային միասնության արդյունք են, ընդգծեց նախարարը. «Այսօր մենք միասնական չլինելու իրավունքը չունենք: Առավել քան երբևէ պետք է պահպանենք ու վառ պահենք 88-ի միասնության ոգին: Չկա որևէ մի կառույց, որը մեզ համար կարողանա փոխարինել պետությանը, որևէ գաղափարախոսություն, որը վեր լինի պետական շահից: Եթե թուլանում է երկիրը, դրանից ոչ ոք չի շահում, կորցնում ենք բոլորս: Սեփական ուժերով մարտահրավերներին դիմակայելու վստահություն պետք է ունենանք, որովհետև ոչ ոք մեր փոխարեն չի կարող լուծել մեր երկրի առաջ ծառայած խնդիրները: Ոչ ոք չի կարող մեզ պաշտպանել, զարգացնել մեր տնտեսությունը, ամրապնդել ժողովրդավարությունն ու Արցախը դարձնել առաջադեմ պետություն: Այդ ամենը պետք է անենք ինքներս: Սա է թերևս Մայիսյան եռատոնի ամենամեծ խորհուրդը»:

Մայիսյան եռատոնի նախօրեին ավանդույթի համաձայն արիության դասեր անցկացվեցին հանրապետության բոլոր ուսումնական հաստատություններում՝ ՊԲ բարձրագույն հրամկազմի, բանակի ստորաբաժանումների հրամանատարների մասնակցությամբ:

Մայիսի 7-ին Արցախի պետական համալսարանի այցելեցին ԱՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ-մայոր Կարեն Աբրահամյանը, կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը:

Ողջունելով հյուրերին՝ ռեկտոր Արմեն Սարգսյանն ասաց, որ նախարարի կարգավիճակով Կ. Աբրահամյանն առաջին անգամ է լինում ԱրՊՀ-ում, որը պետք է վարի արիության դասը: Կրթության, գիտության և սպորտի նախարարությունից հետո, որը համալսարանի լիազոր մարմինն է, ԱրՊՀ-ն ամենասերտ համագործակցության ծրագրերն իրականացնում է Պաշտպանության նախարարության հետ: Վկան զորամասեր այն բազմաթիվ այցելություններն են, որ կազմակերպում է բուհի ուսանողական խորհուրդը ուսանողների հետ տարվող աշխատանքների զծով պրոռեկտորի և համապատասխան բաժնի վարիչի գլխավորությամբ: Վկան այն բազմաթիվ թրենինգներն են, խորհրդակցությունները, որ անց են կացվում սպա հոգեբանների հետ բուհի հոգեբանական կենտրոնում: Դա նույնպես բնական է, քանի որ այսօրվա ուսանողը վաղվա զինվորն է, այսօրվա զինվորների զգալի մասը վաղը համալրելու են մեր ուսանողության շարքերը:

Մայիսյան եռատոնի առթիվ շնորհավորեց ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը: Ասաց, որ յուրաքանչյուր սերունդ իր բաժին պայքարն ունի, և այդ առումով այսօրվա ավագ սերունդը երջանիկ է, որ մասնակիցն ու ակամատեսն է մեր ազգային-ազատագրական պայքարի և ապահովել է փառահեղ հաղթանակներ, աշխարհին ճանաչելի է դարձրել հայ ժողովրդին՝ որպես հերոս, արժանապատիվ ազգ: Նա ընդգծեց, որ այս տարի լրանում է զինադադարի հաստատման 25 տարին, և այդ բոլոր տարիներին խաղաղությունը պաշտպանել է մեր բանակը՝ 18-20 տարեկան զինվորներն իրենց հրամանատարների, սպայական կազմի հետ միասին: Պաշտպանության բանակը սնուցում են կրթական հաստատությունները, և խիստ կարևորվում է, թե երիտասարդներն ինչ պատրաստությամբ ու տրամադրությամբ են համալրում ՊԲ շարքերը: Այդ առումով ցանկալի է, որ նման հանդիպումները բուհերում հաճախակի լինեն. «Հաղթանակները, նվաճումները պահպանելն ու պաշտպանելը նույնպես շատ դժվար է պատվաբեր առաքելություն է: Այսօրվա և ապագա սերունդներին է վերապահված դա: Ավելի քան վստահ են, որ յուրաքանչյուր նոր սերունդ ավելի մեծ պատասխանատվությամբ է կատարելու այդ առաքելությունը»:

Արիության դասն անցավ կառուցողական քննարկման մթնոլորտում: Հանդիպմանը ուսանողներն ու դասախոսները հարցեր ուղղեցին պաշտպանության նախարարին: Ռեկտոր Ա. Սարգսյանի հարցին, թե ինչպիսին է այսօր վիճակը սահմանում, և ինչի հետ են կապված վերջին սրացումները, պաշտպանության նախարարն իրադրությունը գնահատեց հարաբերական կայուն. հակառակորդը,

սարակության վստահությունն ու հարգանքը վայելող բանակը մեր ժողովրդի ու պետության անվտանգության գրավականն է»: Ամբողջ դասի ընթացքում կարմիր թելի պես անցնում էր այն գաղափարը, որ Արցախի Հանրապետության երաշխավորը մեր բանակն է, և բանակաշինության հետագա գործընթացը պետք է մշտապես լինի համապետական, համագազային գործ:

Մայիսյան եռատոնի առթիվ շնորհավորեց ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը: Ասաց, որ յուրաքանչյուր սերունդ իր բաժին պայքարն ունի, և այդ առումով այսօրվա ավագ սերունդը երջանիկ է, որ մասնակիցն ու ակամատեսն է մեր ազգային-ազատագրական պայքարի և ապահովել է փառահեղ հաղթանակներ, աշխարհին ճանաչելի է դարձրել հայ ժողովրդին՝ որպես հերոս, արժանապատիվ ազգ: Նա ընդգծեց, որ այս տարի լրանում է զինադադարի հաստատման 25 տարին, և այդ բոլոր տարիներին խաղաղությունը պաշտպանել է մեր բանակը՝ 18-20 տարեկան զինվորներն իրենց հրամանատարների, սպայական կազմի հետ միասին: Պաշտպանության բանակը սնուցում են կրթական հաստատությունները, և խիստ կարևորվում է, թե երիտասարդներն ինչ պատրաստությամբ ու տրամադրությամբ են համալրում ՊԲ շարքերը: Այդ առումով ցանկալի է, որ նման հանդիպումները բուհերում հաճախակի լինեն. «Հաղթանակները, նվաճումները պահպանելն ու պաշտպանելը նույնպես շատ դժվար է պատվաբեր առաքելություն է: Այսօրվա և ապագա սերունդներին է վերապահված դա: Ավելի քան վստահ են, որ յուրաքանչյուր նոր սերունդ ավելի մեծ պատասխանատվությամբ է կատարելու այդ առաքելությունը»:

Արիության դասն անցավ կառուցողական քննարկման մթնոլորտում:

Հանդիպմանը ուսանողներն ու դասախոսները հարցեր ուղղեցին պաշտպանության նախարարին:

Ռեկտոր Ա. Սարգսյանի հարցին, թե ինչպիսին է այսօր վիճակը սահմանում, և ինչի հետ են կապված վերջին սրացումները, պաշտպանության նախարարն իրադրությունը գնահատեց հարաբերական կայուն. հակառակորդը,

ինչպես միշտ, իր բնորոշ ձեռագրով սարքանքներ է անում, բայց հայկական կողմը պատրաստ է ցանկացած լարվածության, և հավաստիացրեց, որ այն բոլոր աշխատանքները, որ իրականացվել են առաջնագծում, և շարունակվում են տեխնիկական արդիականացման միջոցառումները, հնարավորություն են տալիս լիարժեք գնահատել և վերահսկել հակառակորդի գործողությունները: «Տեխնիկական հագեցվածությունը և ինժեներական միջոցները մեզ վստահություն են տալիս լիարժեք իրականացնել մեր ծառայությունը, մարտական հերթապահությունը, պետական սահմանի պահպանությունը: Մենք ի վիճակի ենք ոչ միայն պաշտպանվել, այլև ցանկացած պահի հարված հասցնել», - ասաց նա:

Բանակային ծառայությունն ավարտած ուսանողներին պաշտպանության նախարարը հրավիրեց լինել իրենց ծառայած դիրքերում և համեմատել 1-2 տարի առաջվա ու ներկայիս պայմանները:

Հարցեր հնչեցին զինվորական համագազետի որակի բարելավման, սպաների ընտանիքներին բնակարանով ապահովելու վերաբերյալ: Նախարարի խոսքով՝ դրանք օրակարգում են: ԿԳՍ նախարար Ն. Աղաբալյանի առաջարկությամբ՝ կամավորների ստորաբաժանում ստեղծել աղջիկների համար՝ դաստիարակող տարբեր հանդիպումների ժամանակ արտահայտած նրանց ցանկությունից, պաշտպանության նախարարը պատասխանեց, որ հարցը կքննարկեն: Նա հորդորեց դասախոսներին խստապահանջություն ցուցաբերել հեռակա կարգով սովորող սպաների նկատմամբ, որպեսզի նրանք բավարար չափով գիտելիքներ ունենան, և ընդհանրապես, ցանկություն հայտնեց իրենց կողմից և վերահսկելի դարձնել նրանց կրթության գործընթացը: Պաշտպանեց բոլոր քաղաքացիների մարտական պատրաստության մակարդակը բարձրացնելու առաջարկը:

Հանդիպման վերջում ռեկտոր Ա. Սարգսյանը արժեքավոր գրքեր նվիրեց նախարարներին: Իր հերթին պաշտպանության նախարարը գրքեր հանձնեց համալսարանին, որոնց մի մասը կտրվի լավագույն ուսանողներին:

Ս. ԽԱԶՍՏՐԱՆ

ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԱՄԻՍ ՄԱՅԻՍԸ



սիրելի տոներից է: Նշվում է մեծ ու փոքր բնակավայրերում, հայրենասիրական միջոցառումներ են կազմակերպվում բոլոր ուսումնական հաստատություններում: Եռատոնի նախօրեին հանրապետության հրապարակները դարձել են համաժողովրդական տոնախմբության կենտրոն:

Մայիսյան եռատոնին նվիրված իր միջոցառումներից մեկը Ստեփանակերտի Ե.Չարենցի անվան հիմնական դպրոցի աշակերտները տնօրինության, ուսուցիչների գլխավորությամբ անցկացրին մայրաքաղաքի Ազատամարտիկների պուրակում: Որպես միասնության առիավատչյա՝ «Հայրենական հաղթանակի օրը» կոչված միջոցառումն անցկացրին մայրաքաղաքի Ազատամարտիկների պուրակում: Որպես միասնության առիավատչյա՝ «Հայրենական հաղթանակի օրը» կոչված միջոցառումն անցկացրին մայրաքաղաքի Ազատամարտիկների պուրակում:

1 Մայիսյան եռատոն՝ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակ, Շուշիի ազատագրում, Պաշտպանության բանակի ստեղծում: Այն մեր ժողովրդի ամենա-



մակահից՝ Շուշի» խորագրով գրական-երաժշտական հանդեսը դպրոցի հետ միասին նա-



խածեռնել էին Արցախի ազատամարտիկների միությունը, «Մեարոպ Մաշտոց» համալսարանը՝ ի դեմս դպրոցում փորձուսուցում անցնող ուսանողների: «Մեր նպատակն է, որ երեխաներն իմանան իրենց պապերի գործած սխրանքները և դաստիարակվեն հայրենասիրական ու ազատատենչ ոգով: Այդպիսի միջոցառումներով ցանկանում ենք մատաղ սերունդի մեջ թաքն պահել մեր ազգային հիշողությունը», - ասաց դպրոցի տնօրեն, վաստակավոր մանկավարժ Անահիտ Պողոսյանը:

Աշակերտները ՊԲ «Ասպետ» համույթի հետ մեկտեղ կատարեցին Հայրենական մեծ պատերազմի տարիներին ստեղծված և մինչ օրս մեծ ժողովրդականություն վայելող ռուսական երգեր՝ «Կատյուշա», «Սինի պատռեկ», «Մոլդավական, սնուզյանկա» և այլ երգեր ու վալսեր. այնուհետև հայկական հայրենասիրական բանաստեղծություններ ու երգեր:

Մայիսյան եռատոնին նվիրված իր միջոցառումներից մեկը Ստեփանակերտի Ե.Չարենցի անվան հիմնական դպրոցի աշակերտները տնօրինության, ուսուցիչների գլխավորությամբ անցկացրին մայրաքաղաքի Ազատամարտիկների պուրակում: Որպես միասնության առիավատչյա՝ «Հայրենական հաղթանակի օրը» կոչված միջոցառումն անցկացրին մայրաքաղաքի Ազատամարտիկների պուրակում:

Շուշի՝ անունն է մեր հաղթանակի, Շուշի՝ գարունն ու փառքը բանակի, Շուշի՝ կյանքի գնով կարմիրն են դու մեր դրոշի:

Շուշի՝ դու ապացույցն ես հայոց ուժի..

Արտասանում, երգում, պարում էին նրանք՝ հոծ բազմության ծափերին արժանանալով: Միասնական ոգին իր արտահայտությունն ստացավ հաղթական շուրջապարով:

ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՐՅԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» ապրիլի 2019 թ.

ք. Ստեփանակերտ

N 315-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՅԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՅՎԵԼԻՔ
2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ՝ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՊԱՍՏԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ՝ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱՆԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՉԱՏ ԵՎ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի շանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համաձայն՝ Արցախի շանրապետության կառավարությունը որոշում է:
1. Հավանություն տալ Հայաստանի շանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում Արցախի շանրապետությանը հատկացվելիք 2019-2020 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների և պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմանը (ամվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով տեղերի ցանկին՝ համաձայն հավելվածի:
2. Արցախի շանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը՝ սույն որոշումը ներկայացնել Հայաստանի շանրապետության կրթության և գիտության նախարարություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում են»
ԱՐՅԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի շանրապետության կառավարության
30 ապրիլի 2019 թվականի
N 315-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՅԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՅՎԵԼԻՔ
2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ՝ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՊԱՍՏԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ՝ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱՆԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԻ

Table with 4 columns: Code, Name, Description, and Count. Rows include categories like 'ՄԵԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՐՆ' and 'ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՂՔԵՐՆ ՊՈՒՏՏԱՆՈՎԱԲԱՆ ՀԱՄԱՄԱՐՆ'.

Table with 4 columns: Code, Name, Description, and Count. Rows include categories like 'ԱՐՄԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՂՔԵՐՆ ՀԱՄԱՄԱՐՆ' and 'ՄԵԴԱՍԻ ԿՈՄՍՏԱՆՈՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՆԵՐԱՍՏՐՈՎ'.

ԴԻՍՈՐԴ-2019

Table with 4 columns: Code, Description, Value 1, Value 2. Includes categories like 'Կրթություն', 'Բուժական գործ', 'Ֆինանսական մանրակարգություն'.

Table with 4 columns: Code, Description, Value 1, Value 2. Includes categories like 'Տնտեսիչ և թեթև արդյունաբերության կրթության և արտադրանքների տեխնոլոգիա', 'Հիմնական գործ', 'Վաճառիչ և մոթոս արտադրանքի տեխնոլոգիա'.

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՐԱԿԱԼ Ա. ԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» ապրիլի 2019 թ.

N 316-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԳՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ` ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՇՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- «Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Յանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասին ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Յանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ Արցախի Յանրապետության կառավարությունը n p n z ու մ է.
1. Հաստատել Արցախի Յանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2019-2020 ուսումնական տարվա ընդունելության` ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը` համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ Արցախի Յանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վարձի չափը որոշում են Արցախի Յանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները` համաձայնեցնելով Արցախի Յանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ:
3. Լեռնային Ղարաբաղի Յանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Յանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին» N81 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված սոցիալական խմբերի ֆինանսավորումը կատարել Արցախի Յանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:
4. Արցախի Յանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2019-2020 ուսումնական տարվա անվճար տեղերի (պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) տասը տոկոսը (առնվազն մեկ տեղ) ըստ մասնագիտությունների հատկացնել պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված քաղաքացիներին:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Յանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում են» ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅԻ Բ. ՄԱՅԱԿՅԱՆ

Հավելված Արցախի Յանրապետության կառավարության 30 ապրիլի 2019 թվականի N 316-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԳՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ` ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՇՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ

1. ԱՐՑԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ 1.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՇՐԱԳՐԻ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ)

Table with 4 columns: Code, Description, Value 1, Value 2. Includes categories like 'Վերջնական մանրակարգություն', 'Մասնագիտության մանրակարգություն', 'Վերջնական մանրակարգություն'.

Table with 4 columns: Code, Description, Value 1, Value 2. Includes categories like 'Ռուսաց լեզու և գրականություն', 'Մեղեդին լեզու և գրականություն', 'Ուղղակարգություն'.



ԴԻՍՈՐԴ- 2019

1.2 ԲԱՎԱՍԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱՆ ՌԻՍԻՆՈՒՄ)

Table with 3 columns: Code, Description, and Value. Rows include categories like 011301.00.6, 011401.00.6, 041101.00.6, 042101.00.6, 053101.00.6, 061105.00.6.

2. «ՃՈՒՇԻՒ ՏԵՆՈՂՈՂԻԱԿԱՆ ՀԱՄԱՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ 2.1 ԲԱՎԱՍԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱՆ ՌԻՍԻՆՈՒՄ)

Table with 4 columns: Code, Description, Value, and another Value. Rows include categories like 041801.00.6, 061105.00.6, 071301.00.6, 071601.00.6, 071602.00.6, 072101.00.6, 073101.00.6, 073201.00.6, 081101.00.6, 084101.00.6.

2.2 ԲԱՎԱՍԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱՆ ՌԻՍԻՆՈՒՄ)

Table with 3 columns: Code, Description, and Value. Rows include categories like 041801.00.6, 061105.00.6, 071301.00.6, 071601.00.6, 071602.00.6, 073201.00.6, 081101.00.6.

2.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱՆ ՌԻՍԻՆՈՒՄ)

Table with 5 columns: Code, Description, Value, and two other Values. Rows include categories like 0601, 2202, 2401, 2916, 3102, 3104, 3106.

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» ապրիլի 2019 թ.

N 317-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՉԱՐԱԳՈՒՅՆ ՌԻՍԻՆՈՒՄԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2019-2020 ՌԻՍԻՆՈՒՄԱԿԱՆ ՏԱՐՎԱԿԱՆ ԱՍԿՐԻՍՏՆՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԿԸ, ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ՌԻՍԻՆՈՒՄԱԿԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅԻ ՌԻՍԻՆՈՒՄԱԿԱՆ ԵՊԱՏՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՌԻՍԻՆՈՒՄԱԿԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈՒՆԴՍՈՒՅՄԱՐԸ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՉԱՐԱԳՈՒՅՆ ՌԻՍԻՆՈՒՄԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅԻ ՌԻՍԻՆՈՒՄԱԿԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՎՈՎ ԿԻՐԱՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱՆ ԵՎ ՀԵՌԱԿԱՆ ՌԻՍԻՆՈՒՄԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Ֆանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասին ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Ֆանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ Արցախի Ֆանրապետության կառավարությունը որոշում է.

- 1. Հաստատել՝ 1) Արցախի պետական համալսարանի 2019-2020 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտությունների, ամվճար և վճարովի ուսուցման տեղերի ցանկը՝ համաձայն N1 հավելվածի: 2) Արցախի Ֆանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ 2019-2020 ուսումնական տարվա ընդունելության՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (ամվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա և հեռակա ուսուցման մագիստրոսի կրթական ծրագրով տեղերն՝ ըստ մասնագիտությունների՝ համաձայն N2 հավելվածի: 2. Թույլատրել Արցախի Ֆանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը՝ պահուստային տեղերի բաշխումը և ըստ հաստատությունների թափուր մնացած տեղերի վերաբաշխումը իրականացնել բարձրագույն ուսումնական հաստատություններին տրամադրված տեղերի շրջանակում: 3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ» ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված N 1 Արցախի Ֆանրապետության կառավարության 30 ապրիլի 2019 թվականի N 317-Ն որոշման

Ց Ա Ն Կ ԱՐՑԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԻ 2019-2020 ՌԻՍԻՆՈՒՄԱԿԱՆ ՏԱՐՎԱԿԱՆ ԱՍԿՐԻՍՏՆՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ՌԻՍԻՆՈՒՄԱԿԱՆ ՏԵՂԵՐԻ

Table with 4 columns: Code, Description, Value, and another Value. Rows include categories like Ա.01.01, Ա.04.07, Է.00.01, Է.00.02, Ը.00.02, Ը.00.03, Ժ.01.02, Ժ.02.01, ԺԸ.00.03, ԺԸ.00.04, ԺԸ.00.06, ԺԳ.00.01, ԺԳ.00.02, ԺԹ.00.04, ԻԳ.00.02, ԻԳ.00.04, ԻԴ.00.02, ԺԺ.00.03.

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԴԻՍՈՐԴ-2019

Հավելված N 2
Արցախի Հանրապետության
կառավարության
30 ապրիլի 2019 թվականի
N 317-Ն որոշման

ԱՐՁԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՋԱՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԳՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԶԻ ԼՐԻՎ
ՓՈՒՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՋԱՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐՋԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿՎ ԵՎ ՇԵՌԱԿՎ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ
ԿՐԹԱԿԱՆ ՇՐՊԱՐՈՎ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ԱՐՁԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԱՐԱՆ

Table with 5 columns: Code, Name, Sub-item, Item, and Value. Lists various educational and administrative categories and their corresponding values.

Summary table with 5 columns: Code, Name, and three numerical values. Totals: 100, 162, 50.

2. «ՇՈՒՇԻ ՏԵՆՆՈՒՈՒԳԻԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Table with 5 columns: Code, Name, Sub-item, Item, and Value. Lists specific items and their values under the '2000' category.

ԱՐՁԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՅԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԴԵՎՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԵՐՆ Ա. ԱԶԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ապրիլի 2019 թ.

ք. Ստեփանակերտ

N 318-Ն

ԱՐՁԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԳՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԶԻ ԼՐԻՎ
ՓՈՒՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐՋԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐՈՎ
(ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿՎ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՏԵՂԵՐՆ ԵՎ ՇԵՌԱԿՎ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը
որոշում է.

- 1. Հաստատել Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2019-2020 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վճարի չափը որոշում է տվյալ ուսումնական հաստատությունը՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ:
3. Թույլատրել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը՝ պահուստային տեղերի բաշխումը և ըստ հաստատությունների թափուր մնացած տեղերի վերաբաշխումն իրականացնել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին տրամադրված տեղերի շրջանակում:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»
ԱՐՁԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅԻ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԴԻՍՈՐԴ-2019

Հավելված Արցախի Հանրապետության կառավարության 30 ապրիլի 2019 թվականի N 318-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԳՈՒԽԵԼՈՒԹՅԱՆ` ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՄՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ԳՈՐԾԵՐԻ ԱՆՎՃԱՐ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՄՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՇԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ

1. ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՄԱՐԱ ԶԱՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԶՈՒՆՔ

Table with 5 columns: Code, Institution Name, Total students, Boys, Girls. Rows include 0402, 0406, 0418, and a total row.

2. ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱԶԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԶՈՒՆՔ

Table with 4 columns: Code, Institution Name, Total students, Boys, Girls. Rows include 0501, 0502, 0503, 0504, 0505, and a total row.

3. ՇՈՒՇԻ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԶՈՒՆՔ

3.1. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ

Table with 4 columns: Code, Institution Name, Total students, Boys, Girls. Rows include 0514, 0515, 2014, 2808, and a total row.

3.2. ՇԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ

Table with 3 columns: Code, Institution Name, Total students. Rows include 2302 and a total row.

4. ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ԶՈՒՆՔ

Table with 3 columns: Code, Institution Name, Total students. Rows include 0319, 0506, and a total row.

5. ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Table with 4 columns: Code, Institution Name, Total students, Boys, Girls. Rows include 2014, 2203, 2304, 2311, 2401, 2603, and a total row.

6. ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Table with 3 columns: Code, Institution Name, Total students. Rows include 1207, 2304, 2401, 2704, 2809, 2905, and a total row.

7. ՇՈՒՇԻ «ԵՆԻԿ ՄՈՉՅԱՆ» ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ)

Table with 4 columns: Code, Institution Name, Total students, Boys, Girls. Rows include 1002, 1006, 1210, 2311, 2809, 2902, 2907, 2908, and a total row.


ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՂՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱՆ Ա. ԱԶԱՐՅԱՆ

ԱՄԱՐԱՍՈՒՄ` ՄԱՇՏՈՑՅԱՆ ՊԱՏՊԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՎ

Գրաճանաչ դարձած աշակերտների Այբուբենի տոնը հիշարժան, տպավորիչ ու խորհրդանշական դարձնելու նպատակով Մարտունու հ.1 միջնակարգ հոսքային դպրոցի դասավարները տնօրինության հետ մեկտեղ նախաձեռնեցին «Հրաշագործ այբուբեն» վերտառությամբ միջոցառում այն սրբավայրում, որտեղ 1600 տարի առաջ դրվեց Արցախի դպրության հիմքը:

Աշակերտները համառոտ ներկայացրին հայոց ոսկեդեմիկ այբուբենի ստեղծման պատմությունը, հանելուկների և հեքիաթների միջոցով բացահայտեցին նրա նշանակությունը: Երկրպագվեց ու մեծարվեց այրն այն, ում իմաստության ջահը յուրաքանչյուր քայլափոխի լուսավորում է սերունդների ճանապարհը:

Աշակերտները խոստացան լինել Ուսուցչապետի գործի շարունակողը:



Ելույթներով հանդես եկան տնօրեն Կարինե Պողոսյանը, դասավարներ Սուսաննա Սարգսյանը, Սևիլա Մուսայեյանը, որոնք կարևորեցին օրվա խորհուրդը: Տնօրենը նշեց, որ ինչպես դարեր առաջ Մեսրոպ Մաշտոցն է Ամարասի դպրոցում կրթել ու դաստիարակել իր սաներին, այսօր էլ մեր աշակերտներն են այդ նույն դարբնոցում ի ցույց դնում հրաշագործ այբուբենը:

Դպրոցի կոլեկտիվի նախաձեռնությունը սոսկ միջոցառում չէր, այն յուրօրինակ հայրենասիրական դաս-էքսկուրսիա էր: Եվ ուսուցանեց, որ Ամարասում բացված առաջին դպրոցն իմաստության այն բերքառատ ծառն է, որը հետագայում շյուղեր տվեց նաև արցախյան մյուս բնակավայրերում: Ցնծում էր Ամարասը, Մաշտոցի պատգամներն էին թևածուռ ամենուր, որոնց հրամայականով ու խորհուրդներով պիտի առաջնորդվեն ներկա և գալիք սերունդները:

Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ





ԲԱՋՈՐԴԻԵ

ԸՆԿՆՈՂ ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ



Ասուպի պես են մեր նահատակ հերոսները... մեկիկ-մեկիկ ընկնում են հավերժի ծովը...

Քսանհինգ տարի շարունակ ընտանիքից ֆիզիկապես բացակա հայրենապաշտ զավակը միշտ հարազատների կողքին է և իր ներկայությամբ իմաստավորուտ է նրանց...

Վշուտ Սերգեյի Սկրտունյան: Ծնվել է 1969 թվականի ապրիլի 28-ին Ստեփանակերտում: Յոթ տարեկանից հաճախել է Ստեփանակերտի հ.3 ռուսական դպրոցը:

25-ամյա մատաղ կյանքը: Աշտու ընդամենը 5 ամսվա ամուսնացած էր, չհասցրեց վայելել կյանքը, զավակներ ունենալ:

Ամեն ինչ ավարտվելու է: Երբ վերադառնամ, ի՞նչ երեսով եմ նայելու այն տղաների աչքերին...

ԸՆԴՕՐԻՆԱԿԱՆ ԱՐԺԱՆԻ ԴԱՍ

Կրթօջախն այն աշխարհն է, ուր մտնում են սերունդները և գործնում գիտելիքների շտեմարանով: Այդ շտեմարանը սերունդների առաջ բացում են բանիմաց և նվիրյալ մանկավարժները...

ՄԻՇՏ ՎԱՅՐԵՆԻ ԵՐԿՐԻ ԶԻՆԿՈՐ

Նա, ով որոշակի պարտականություններ ունի կատարելու հայրենիքի հանդեպ ու պարտավորված է զգում իրեն, ուրեմն՝ հայրենիքի զինվոր է, ազգի նվիրյալ: Մեկը հայրենի սահմաններն է անառիկ դարձնում, մյուսը մտահոգված է մատաղ սերնդի կրթադաստիարակչական խնդիրներով:

Չարկեց ֆիլմ պատրաստել խնամապատի հերոսական ինքնապաշտպանության մասին՝ ներառելով նաև իր ներդրումը: Գրեթե ամբողջ կյանքը հանդիսանում է պատմության և պատմագրության հանդեպ հարգանքի և սիրույի արտահայտություն:

տնօրեն Լյուդմիլա Մոսիյանն ուսուցչական կոլեկտիվի և դպրոցականների ամուսնից իր երախտագիտությունը հայտնեց նման աջակցության համար: Նվերները դպրոցին հանձնեց «Արարատբանկ»-ի Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրեն Աշոտ Օսիպյանը:

Աննա ԱՎԱՆԵՍՅԱՆ Ընդի Սարգսի Աբրահամյանի անվան միջն. դպրոցի ուսուցչուհի

Սուրբայա ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ

ՀՊԱՐՏԱՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՎ

Այս կրթության, գիտության և սպորտի նախարարության և «Ռուսական համայնք» ՀԿ-ի համատեղ ռազմավարական ծրագրի 20-25-ը Արցախում անցկացվեցին միջոցառումներ՝ «Հայտնությունները ենք մեր բարեկամներով» ընդհանուր խորագրով: Մեկնարկը տրվեց Բերձորի Վ. Թեքեյանի անվան հ.1 միջնակարգ դպրոցում, որտեղ «Իմ ընկեր» խորագրով գրական-երաժշտական ցերեկույթ կազմակերպվեց՝ նվիրված արցախյան գրող, լրագրող, թարգմանիչ Աշոտ Բեգլարյանի և ռուս գրող, Արցախի բարեկամ փոխտնօրինի ստեղծագործություններին: Գրողները պատմեցին, թե ինչպես է սկիզբ առել իրենց ծանոթությունը 13 տարի առաջ վիրտուալ ձևով, որը հետո վերածել է մեծ բարեկամության՝ ընդգրկելով մեծ շրջանակ: Նույն օրը «Գրիգոր Նարեկացի» համալսարանում տեղի ունեցավ հանդիպում ռուս գրողի հետ:



Միջոցառումների շարքը շարունակվեց Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ.3 միջնակարգ դպրոցում, որտեղ «Պատմական լավատեսը» թեմայով բաց դաս կազմակերպվեց Ա.Բեգլարյանի ստեղծագործությունների հիման վրա: Միջոցառման կազմակերպիչ, ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Կարինե Աթաբեկյանը, արժևորելով գրողի ստեղծագործությունը, ասաց, որ հեղինակի թեմատիկան հիմնականում պատերազմն է: Աշակերտները հատվածներ կարդացին նրա գրքից, հանդես եկան երգերով ու պարերով, հարցեր ուղղեցին գրողին: Աշակերտներից մեկը նրան նվիրեց իր արած գրողի դիմանկարը:

Այս ԿԳՍՆ ռուսաց լեզվի գլխավոր մասնագետ, տեսուչ Ռ.Օսիպովը, խոսելով միջոցառման մասին, ասաց, որ նպատակն է արժևորել ռուսաց լեզուն, նրանով ստեղծագործող արցախյան գրողներին. «Կարողավ Ձեր գրքերը՝ ընթերցողը պատկերացում է կազմում արցախյան անցած հերոսական ուղու մասին: Ձեր հերոսները մարդկային լավագույն հատկանիշներով են դաստիարակում ընթերցողներին»,- Ա.Բեգլարյանին դիմելով՝ ասաց նա:

Բանաստեղծ Սոկրատ Խանյանն ասաց, որ Աշոտ Բեգլարյանն ստեղծել է Արցախյան ազգային-ազատագրական պայքարի գեղարվեստական տարբերություն:

Ելույթ ունենալով՝ Ա.Բեգլարյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման կազմակերպիչներին ու աշակերտներին՝ իրեն հավուր պատշաճի ներկայացնելու համար: Եվ պարզաբանեց, որ ինքը պատերազմը մերժում է՝

լիք սերունդներին»,- ասաց նա:

Օրվա երկրորդ կեսին դպրոցի դահլիճում կազմակերպվեց գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված Վ.Կոնոպլովի ծննդյան 50-ամյակին «Ես ռուս եմ, ես սիրում եմ հայերին նույն սիրով, ինչ սիրով իմ ազգակիցներին» խորագրով: Միջոցառման կազմակերպիչ, ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ Ստելլա Առաքելյանը և դպրոցի աշակերտները ներկայացրին ռուս գրողի կենսագրությունը, Հայաստանին ու Արցախին նվիրված նրա բանաստեղծությունները: Նրա ստեղծագործությունները հայերեն թարգմանած՝ բանաստեղծ, գրականագետ Սոկրատ Խանյանն ընդգծեց, որ խիստ պատշաճում է Վ.Կոնոպլովին տված՝ «Հայ ժողովրդի ռուս որդի» գնահատականը: Երախտագիտություն հայտնելով ամեն անգամ Արցախում ստացած ջերմ ընդունելության համար՝ Վ.Կոնոպլովն ասաց, որ ինքը հպարտ է Արցախ աշխարհին և արցախցիներին անձամբ ծանոթանալու համար:

Միջոցառմանը ներկա՝ ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, ելույթ ունենալով, նշեց, որ Արցախի

ժողովուրդը խորին երախտագիտությամբ է լցված իր ճակատագրով ու ցավով տառապող և հաջողություններով ուրախացող յուրաքանչյուր ազգի հանդեպ: Նա Կոնոպլովի հետ Արցախի կապը համարում է բարեկամական, իսկ արցախյան գրող Աշոտ Բեգլարյանի հետ ընկերությունը՝ հոգևոր և մշակութային հիմքի վրա առաջացած եղբայրական հարաբերությունների ամրապնդում երկու ազգերի միջև: Ն.Աղաբալյանը ԱՀ Նախագահ Բ.Սահակյանի անունից «Երախտագիտություն» մեղալ հանձնեց Վ. Կոնոպլովին՝ հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդման, Հայոց ցեղասպանության ճանաչման գործում ակտիվ մասնակցության համար:

Միջոցառման հաջորդ վայրը Ստեփանակերտի Ա.Ղուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցն էր, որտեղ ռուսաց լեզվի մեթոդիկները նախագահ Քրիստինե Գրիգորյանի ղեկավարությամբ աշակերտների ռազմավարական «Գերված մեր պատմությամբ և մշակույթով» խորագրով դաս-հուշ ներկայացվեց՝ նվիրված հայ ժողովրդի մեծ բարեկամ Կիմ Բակիչին, որը երկրային կյանքին հրաժեշտ է տվել այս տարվա մարտի 5-ին: Մարդ, որն իր կյանքի 50 տարիները նվիրել է Հայաստանին ու հայ ժողովրդին, նրա պատմության, մշակույթի, կրոնի ուսումնասիրությանը, ստեղծել ֆիլմեր, գրքեր, այդ թվում՝ Արցախի մասին («Արցախի



հոգևոր գանձերը»): Դասին ներկա հյուրերի թվում էր ԱՀ նախագահի խորհրդակցության Գրիգորի Գաբրիելյանը, որը հուշի պատասխան ներկայացրեց մեծ մարդու հետ իր բարեկամությունից:

«Հայտնաբերում ենք մեր բարեկամներով» միջոցառումների շարքը եզրակացվեց Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջում կազմակերպված՝ «Բարդու և կեչու արանքում» խորագրով գրական-

երաժշտական երեկոյով՝ նվիրված արցախյան լրագրող, բանաստեղծ, «Վեստնիկ» հեռուստածրագրի խմբագիր Սեյրան Կարապետյանի գործունեությանը: Վերջին երկու տարում լույս են տեսել ռուսալեզու հեղինակի երեք գրքերը, որոնցում ամփոփված են բանաստեղծություններ, մանրասպատումներ, խտացված մտքեր: Երեկոն, որը վարում էր վաստակավոր մանկավարժ Վերա Խաչատրյանը, անցավ անբռնազբոս, հեղինակի և հանդիսատեսի հետ ջերմ երկխոսության մթնոլորտում: Լրագրող Ա.Կարապետյանը նորովի ներկայացավ հանրությանը՝ երգող, արտասանող, քնարական հոգով:

Արցախի գրողների միության անունից նրան ԳՄ անդամության տուն հանձնեց գրքեր՝ Կարինե Միքայելյանը: Երեկոյին նրա բանաստեղծությունների արտասանությամբ հանդես եկան հ.3 դպրոցի սաները: Երգչուհի Սոֆի Մելքունյանը կատարեց ռոմանսներ (նվագակցող՝ Նարեթոյա Հակոբյան):

Ս.Կարապետյանին շնորհավորեցին ռուսական համայնքի ղեկավար Գալինա Սոմովան, որը նրան հանձնեց խորհրդակցական հուշանվեր՝ «Վեստնիկ»-ի հեռարձակման 10-ամյակի կապակցությամբ, Վ.Կոնոպլովը, Ս.Խանյանը, գրողի որդի Վալերին՝ իր հեղինակած չափածո խոսքով, ուրիշներ:

Հեղինակի նախածոնությունը իր հետ երկխոսության մեջ մտած հանդիսատեսների թվում էր ԱՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, որի դիտարկմամբ՝ խորհրդային տարիներին Արցախը հենց նրանով է առանձնացել, որ, ենթարկվելով ազգային ճնշման, կարողացել է ոչ միայն պահել իր ինքնությունը, այլև ռուսաց լեզվի միջոցով հաղորդակցվել աշխարհի հետ և այսօր էլ չի շեղվում այդ գծից:

Երեկոն և «Հայտնաբերում ենք մեր բարեկամներով» միջոցառումը եզրակացվեց այն համակարգող և գլխավոր կազմակերպիչ, ԱՀ ԿԳՍՆ ռուսաց լեզվի գլխավոր մասնագետ Ռուբեն Օսիպովը: «Արցախցիներս սիրում և զնահատում ենք մեր երկիրը, մեր մայր լեզուն՝ հայերենը, բայց նաև բաց ենք աշխարհի առաջ, հարգում և ընդունում ենք նրանց, ովքեր անտարբեր չեն Արցախի ճակատագրի հանդեպ»,- ասաց նա՝ մասնավորապես կարևորելով ռուս ժողովրդի լավագույն մտավորականների՝ հայերի հետ դարավոր բարեկամության ավանդույթներն այսօր շարունակող Վ.Կոնոպլովի ներդրումն այդ կապերն ամրապնդելու և զարգացնելու գործում:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԵԿՆԱՐԿԸ՝ ԲԵՐՁՈՐՈՒՄ

ՌԴ Նիժնի Նովոգորոդ քաղաքից է բանաստեղծ փոխտնօրինի Վ.Մարտինովը՝ «Наша Среда» ռուսական լրատվական-վերլուծական կայքի գլխավոր խմբագիրը, որն արդեն 10 տարուց ավել է՝ Արդեշտի «սև ցուցակում» է: Ռուս գրող, որն աշխատանքներ է տանում Հայոց ցեղասպանության, Արցախի ճանաչման հարցերում: Հայաստանն ու Արցախը դարձել են նրա երկրորդ հայրենիքը: Նրա և արցախյան գրող-հրապարակախոս Աշոտ Բեգլարյանի ծանոթությունն ու ընկերությունը դարձել են նախապայման, որ Արցախում ամեն տարի կայանա «Ռուսական խոսքի օրեր» միջոցառումներ: Այդ օրերին հանրապետության դպրոցներում, մշակութային օջախներում կազմակերպվում են տոնակա հանդեսներ, ցերեկույթներ, երեկոներ՝ նվիրված ռուսաց լեզվին: Այս հարցում առավել ակտիվ է Քաջաթաղի շրջանը, և ռուսաց լեզվի մասնագետ, այժմ Բերձորի մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն Կարինե Մովսեսյանի նախաձեռնությամբ ու կազմակերպմամբ տեղի են ունենում գրական-երաժշտական հանդեսներ, որոնց մասնակիցները դպրոցականներ են: Տարիներ առաջ կայացավ նման հանդես՝ նվիրված հայ հայտնի երաժիշտ, ՌԴ ժողովրդական արտիստ Միքայել Թարիվերդիին: Ներկա էր երգահանի այրին՝ Վերա Թարիվերդիին: Այս տարի լրացավ Վ.Կոնոպլովի 50-ամյակը: Այս առիթով և Աշոտ Բեգլարյանին նվիրված՝ «Իմ ընկեր» խորագրով Բերձորի Վ.Թեքեյանի անվան հ.1 միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ գրական-երաժշտական ցերեկույթ:

Միջոցառումից առաջ հյուրերը հանդիպում ունեցան շրջվարչակազմի ղեկավար Ստ. Սարգսյանի հետ, որը բարձր գնահատեց հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, ռուսաց լեզվի դերը: «Բանիմաց ու նվիրյալ ուսուցիչների շնորհիվ հայոց դպրոցներում մեր երեխաները սովորում են ռուսաց լեզուն: Գիշտ է, հայկական դպրոցներում ռու-

տեղ, նշանակում է եկել են հարազատ օջախ, ասաց նա,- ռուսաց լեզուն երկար դարեր հայ և ռուս ժողովրդին միմյանց կապող օղակի դեր է խաղացել»:

«Սասնաղիտական աշխատանքի բերումով հաճախ են լինում Քաջաթաղի շրջանի դպրոցներում: Միշտ հաճելի է եղել շփվել քաջաթաղցի աշակերտների, ուսուցիչների հետ»,- ասաց ԿԳՍՆ ռուսաց լեզվի տեսուչ Ռ.Օսիպովը: Վ.Կոնոպլովը Ստ.Սարգսյանին նվիրեց իր «Հայաստանը՝ սիրո երկիր» բանաստեղծությունների ժողովածուն՝ ռուսաց և հայոց լեզուներով:

Դպրոցում հյուրերին ընդունեց տնօրեն Անահիտ Քոսակյանը՝ ողջունելով նրանց այցը:

Մտտ մեկ ժամ դպրոցի տարբեր դասարանների աշակերտները ռուսերեն հանդես եկան բեմում: Երգ ու ասումներ, հայկական պարեր: Ներկայացրին Վ.Կոնոպլովին և Ա.Բեգլարյանին: Հնչեցին Կոնոպլովի բանաստեղծություններից, որոնց



սերենն ուսուցանվում է որպես օտար լեզու, ունի մրցակիցներ, ինչպիսին անգլերենն է, ֆրանսերենը, սակայն մեր ժողովրդի համար մայրենիից հետո ռուսերենը երկրորդն է»,- ասաց նա: Ռուսաց լեզվի ուսուցման գործում բարձր գնահատեց Կ.Մովսեսյանի դերը, որը հաճախ է կազմակերպում միջոցառումներ ռուսաց լեզվով:

Վ.Կոնոպլովը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար: «Արցախն ինձ համար երկրորդ տուն է: Երբ գալիս են այս-

զուգահեռ էկրանին ցուցադրվեցին Հայոց աշխարհն իր հրաշք բնությամբ ու պատմական հուշարձաններով, որոնց մասին շատ է գրել Կոնոպլովը: Աշակերտները բեմադրեցին հատված Ա.Բեգլարյանի պատմվածքներից՝ նվիրված Արցախյան գոյամարտին: Այս անգամ էկրանին Գոյամարտի մասին պատմող կարգեր էին: Հանդեսի վերջում աշակերտները ծաղիկներ նվիրեցին ներկայից, հյուրերին հրավիրեցին պարի: Ա.Բեգլարյանը և Ռ.Օսիպովը նույնպես ներկայացրին Կոնոպլովին,

որն արդեն 20-ից ավելի անգամ է, ինչ այցելում է մեր հայրենիք՝ Հայաստան ու Արցախ, բազում գեղարվեստական ու հրապարակախոսական ստեղծագործություններ է նվիրել Հայոց երկրին ու նրա բնակիչներին: Բարձր գնահատվեց դպրոցի սաների ելույթը: Վ.Կոնոպլովն ասաց. «Առաջին անգամ Հայաստան եկա 2008 թվականին՝ որպես զբոսաշրջիկ: Այնուհետև իմ այցերը Հայաստան և Արցախ տարբեր անձանց կողմից միշտ ուղեկցվում էին մեծ ուշադրությամբ՝ քաղաքական գործիչներ, զինվորականներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, հասարակ մարդիկ, լրագրողներ, մշակույթի, կրթության, գրականության և այլ բնագավառների ներկայացուցիչներ: Հանդիպումների ընթացքում բացի հետաքրքրությունից իմ անձի նկատմամբ զգում են սեր և հարգանք, երախտագիտություն և շնորհակալ են դրա համար»:

Բերձորի արվեստի դպրոցի կերպարվեստի բաժնի ուսուցիչ Տաթև Բաբայանը Վ.Կոնոպլովին ու Ա.Բեգլարյանին նվիրեց նրանց դիմանկարները՝ իր հեղինակությանը: Արցախում ռուս գրականությունը և մշակույթն ուշադրության կենտրոնում պահելու գործում ցուցաբերած գործունեության համար Կ. Մովսեսյանը «Наша Среда online»-ի կողմից արժանացավ դիպլոմի, որը հանձնեց Վ.Կոնոպլովը: Հանդեսին մասնակից աշակերտներին Ա.Բեգլարյանը նվիրեց իր գրքերից: Ստեփանակերտ մեկնելուց առաջ հյուրերը և հանդեսին մասնակցող աշակերտներն այցելեցին ապրիլյան պատերազմի ժամանակ մարտիրոսված հերոսների հուշակոթող ու ծաղիկներ խոնարհեցին խաչքարին:

ԶՈՒՐԱՔ ԸՆԹՈՒՄ

## Ч. ЧАКМАКЧІ

## "Я РУССКИЙ, Я ЛЮБЛЮ АРМЯН ОДНОЙ ЛЮБОВЬЮ, КАК СВОИХ СОГРАЖДАН"



*По рекам небесным, по горным дорогам,  
Влюбленное сердце несу я без страха.  
К воспетым в стихах фаворитам у Бога,  
Моим современникам, людям Арцаха.  
И в жизни моей, и в моем послесмертье  
Душа моя с вами, и вы это, зная,  
Меня посвящаете в тайны бессмертья  
Особого бренда арцахского края.  
В нем радость и боль, словно горные воды,  
В жару освежают, но камни их остры.  
В нем правда времен и желание свободы,  
Но главное, вы - мои братья и сестры.*

**Виктор Коноплев.**  
28 февраля 2019 г.

Молодой талантливый русский поэт, журналист Виктор Коноплев, связавший свою судьбу с судьбой Арцаха и Армении, стал близким другом нашего народа.

Виктор Валерьевич Коноплев родился 22 марта 1969 года в г. Малорита Брестской области Белоруссии в семье офицера Вооруженных сил СССР. В настоящее время проживает в г. Нижний Новгород Российской Федерации.

В 1994 году с отличием окончил Волго-Вятский кадровый центр по специальности "Государственное и муниципальное управление". Во время учёбы создал и преподавал в негосударственном образовательном учреждении курс "Психология общения".

Имеет сертификаты курсов "История Армении", "История армянской музыки".

Литературную деятельность начал в 1983 году. Публиковался в многочисленных сетевых и печатных изданиях, коллективных сборниках. В 1992 году литературное объединение выпустило свой первый сборник "Проба", в котором были и стихи Виктора Коноплева. Сам сборник и его участники были отмечены на Областном семинаре молодых поэтов в г. Владимире.

В 1993 году на стихи Виктора Коноплева музыкант и певец Сергей Данилов написал музыку и записал диск "Не люби меня".

В 1998 году, во время службы в органах внутренних дел, Виктор выступил с инициативой и организовал издание сборника стихов сотрудников органов внутренних дел Нижегородской области "Мы твои постовые, Россия".

В 2002 году при участии Нижегородского отделения Союза писателей России вышла его первая книжка "Состояния любви".

В 2004 году Нижегородский ансамбль "Мир искусства" записывает несколько романсов на его стихи и включает их в юбилейную программу и компакт-диск "Земля Серафима Саровского".

В 2006 году Виктор Коноплев становится дипломантом конкурса "Золотое перо Руси" за стихотворение "В гостях у Белобоба".

В 2009 году выходит его второй сборник "40".

В 2013 году В.Коноплев становится почетным членом Союза писателей Нагорного Карабаха. С 2014 года - член Санкт-Петербургского городского союза писателей и Международного сообщества писателей.

В 2004 году был награжден медалью "В память 200-летия со дня рождения М.Ю. Лермонтова".

В 2004 году Виктор Коноплев создаёт свой первый сайт "Информационный голод", который представлял собой базу интернет-адресов мировых информационных агентств, прессы, телевидения, радио, сетевых изданий, сайтов, не являющихся СМИ, но содержащих информацию политического, экономического, соц-

иального, культурного и религиозного характера, а также интернет-адресов проектов, сайтов, страничек и блогов журналистов, а также людей, причастных к производству и трансляции информации, и базу официальных сайтов органов государственной власти и управления большинства стран мира.

Впоследствии в проекте "Информационный голод" был создан раздел "Среда обитания", который представлял собой своеобразный путеводитель по городам и весям мира. Автор предложил всем желающим прислать интересную информацию о своих краях и размещал её на сайте. Информации было очень много, и проект "Среда обитания" был выделен в отдельный сайт.

"Наша Среда online" поддерживает инициативы и сама реализует проекты, способствующие достижению целей деятельности. Вот лишь некоторые из них:

- "Помню и требую". В канун 100-летия Геноцида, совместно с испанским агентством "Вега Медиа Пресс" на сайте и в испаноязычных СМИ мира была опубликован цикл статей "Интеллигенция испаноязычных стран о Геноциде армян".

- "Арцах, я люблю тебя!" Конкурс сочинений среди учащихся школ Арцаха. По его итогам был выпущен одноименный сборник.

- "Дни Микаэла Таривердиева в Арцахе". Серия мероприятий, посвященных жизни и творчеству выдающегося композитора, в которых приняла участие вдова маэстро.

- "Карабахский фронт Москвы". (<http://nashasreda.ru/karabaxskij-front-moskvy/>). Проект посвящен советской и российской интеллигенции, не побоявшейся в трудные времена глухой информационной блокады вокруг событий в Нагорном Карабахе поднять свой голос в защиту прав армянского населения древнего Арцаха, тем, кто доносил правду о событиях в самоопределившейся республике. На сегодняшний день это один из полных архивов публикаций.

Виктор Коноплев является автором литературного русского перевода Гимна Арцаха.

В 2012 году энциклопедия фонда "Хайаз" разместила статью о Викторе Коноплеве в разделе "Друзья армянского народа", в 2016 году страница о нем появилась в армянском разделе энциклопедии "Википедия".

Многочисленные проекты и публикации в сетевых и печатных средствах массовой информации снискали Виктору Коноплеву авторитет среди армян всего мира и сторонников укрепления армяно-русской дружбы.

За свою деятельность он награжден Грамотой Министерства диаспоры Республики Армения (2010), медалью "40 лет Арцахскому государственному университету" (2011), Почетной грамотой Администрации Кашататского района НКР (2012), медалью "Материнское напутствие" Союза родственников погибших азатамртиков (2012), юбилейной медалью "10 лет Союзу армян России" (2014), Благодарностью "Школы боевого искусства Геворгяна" (2014), медалью "25-летие Карабахского национально-освободительного движения" (2015), международной премией "Согласие" (2015). В 2019 году Виктор Валерьевич Коноплев был удостоен государственной награды Республики Арцах - медали "Благодарность".

Первое знакомство с армянами произошло в далеком 1976 году, когда 7-летним мальчишкой отец повез Виктора в Абхазию, в армянское село, где жил его друг Саркис Меликян. По словам Виктора, "это был совершенно новый мир, люди, дома, еда, гостеприимство, внимание". Знакомство с армянами стало первой ступенью. Интерес к армянам возник позже, когда Виктор поступает в университет и знакомится с армянином. И тогда впервые слово "геноцид" промелькнуло в сознании молодого человека.

Служба в армии. Именно здесь он впервые почувствовал значение армянской

фразы "цавыт танем".

7 декабря 1988 года сердце молодого бойца запечатлелось огромной фотографией: "Глаза бабушки, полные горя и безысходности, и подпись "Цавыт танем, Армения". Шок, который вызвало спитакское землетрясение, породил встречный порыв сострадания и боли за произошедшее", - как позже скажет поэт.

2006 год станет судьбоносным в жизни молодого журналиста. В 2006 ВК запустил интернет - проект, где мог публиковаться любой творческий человек. "Как ни странно,- говорил ВК,- больше всего публикаций было из Армении". И вот тогда-то писательница Елена Асланян прислала рассказы для публикации на сайте "Среда обитания".

Автором рассказов на военную тему был русскоязычный писатель из НКР Ашот Бегларян. Знакомство переросло в личную дружбу и сформировало армянофильские взгляды Виктора. Под влиянием Ашотаон начинает изучать историю, традиции и культуру армянского народа, историю геноцида армян и карабахского конфликта. Под впечатлением знакомства с Ашотом Бегларяном Виктор Коноплев пишет стихотворение "Прикосновение к Арцаху" с посвящением Ашоту Бегларяну.

"6 дней в Раю" - так назвал свой первый визит в Армению и Арцах в 2008 году ВК.

"Мой роман с Арменией начался, как только нога моя ступила на армянскую землю", - написал ВК, - *Шесть дней, проведенных мной в Нагорном Карабахе, стали для меня днями откровений, днями обретения родины и близких сердцу людей. Сейчас, спустя несколько месяцев, когда улеглись эмоциональные всплески первых впечатлений, я продолжаю находить под магией этого сказочного края, под притяжением обаяния модников-гор, как будто специально для меня менявших наряды от пышной зеленой растительности до скудной бурой травы обнаженных скал. В моих глазах запечатлелись картины храмов, монастырей и хачкаров. Вместе с пламенем свеч, зажженных мной в святых местах, я лечу к Господу, чтобы поблагословить его за этот рай на земле, за благословенных людей, живущих в этом раю, улы, совсем не по-райски. Я прошу Господа воздать должное этому красивому, трудолюбивому, щедрому, гостеприимному народу".*

Виктор приобрел в Арцахе много друзей: Альберта Восканяна - писателя, журналиста, блогера, Альберта Саркисяна - архитектора, сожалению, его недавно не стало.

После первой поездки на армянскую землю он знакомится с деятельностью Нижегородской армянской общины, которое оказывает содействие в его начинаниях. В 2012 году о дружбе ВК и армян Нижнего Новгорода российским ТВ был снят фильм из цикла "На языке сердца". Результатом совместной деятельности становится сайт "Нижегородские армяне". И вскоре рождается проект "Наша среда", который объединил армян со всего мира. Сайт, на котором могут печататься люди разных возрастов и профессий. Россия-Армения-Арцах-Диаспора - таков диапазон сайта. После этого Виктор Коноплев стал активно заниматься общественной деятельностью по установлению и укреплению межармянских и российско-армянских связей, продвижения вопросов признания Геноцида армян и признания Нагорно-Карабахской Республики. Будучи модератором группы "Мы за признание Геноцида армян", он пригласил в неё более 15000 человек разных национальностей.

*Уж лучше быть карманным вором,*

*Чем стать источником раздоров*

*Между народами двух стран*

*Я русский. Я люблю армян.*

*Одной любовью, как своих сограждан.*

Во время одной из поездок в Арцах Виктор Коноплев знакомится с Рубеном Александровичем Осиповым, государственным инспектором русского языка и литературы МОН и С РА. На Днях России в Степанакерте в июне 2010 г. произошла первая встреча.

В проводимых Рубеном Александровичем "Днях Русского слова в Ар-

цах", ставшими уже традиционными и собиравшим под свое крыло друзей Арцаха из Армении и России, Виктор Коноплев становится постоянным гостем. По традиции, они проводятся каждый год весной. Под впечатлением этих поездок весной начиная с 2011 г. В. Коноплев пишет стихотворение "Вновь за весною полечу...".

*Вновь за весною полечу*

*в мой горный край, прекрасный край.*

*Увидеть снова я хочу*

*библейский край, предвечный край.*

*В тебе мечтай прорасти*

*великий край, духовный край,*

*К тебе ведут мои пути*

*распятый край, воскресший край.*

2013 г. В Арцахе, в Степанакерте, состоялась презентация книги В. Коноплева "Армения как состояние любви".

"Армения существует на уровне чувств. Как состояние души, она настолько порывиста и эмоциональна, что ее энергетика зашкаливает, пронизывает насквозь, отрывает от обыденности.

Она словно скрипка, способная вызвать своими звуками приливы и отливы любви, бури негодования, потоки ностальгии, пожары страстей и вспышки откровений".

Видимо, сам Ангел Господень играет на этой скрипке, охраняя её. И пока звучит эта чарующая мелодия, не пройдут времена Армянства... А значит не пройдет и в моей душе это потрясающее состояние любви,- в предисловии к книге написал Виктор Коноплев.

*Звуки в сердце, как строки Завета,*

*От звучания скрипки с небес.*

*Вместе с радостью скорбная нота,*

*С благодатью-печаль и тоска.*

*В этой музыке-вера народа,*

*Что хранит его душу века.*

*"Сколько раз рвали струны у скрипки,*

*Но она под охраной Христа.*

*-Знай, мой друг,- молвил Ангел с улыбкой,-*

*Скрипка Господа-наш Айастан...*

Стихи ВК перевел на армянский язык поэт-переводчик Сократ Хаян. В книге очень оригинально сочетаются русский и армянский варианты стихов.

Стихотворение "Любить Армению по-русски..." включено в учебник русского языка для 12 класса в Армении и в Арцахе.

2016 г., апрель, 4-дневная война. Виктор Коноплев не остался в стороне. Он с нами всегда: и в радости, и в горести. Не прошло и месяца, как съемочная группа портала "Наша среда" во главе с Виктором Коноплевым посетила Галиш, Мадахис и Мартакерт, сняла серию репортажей на первой линии обороны. Итоговый фильм под гордым названием "Арцах непокоренный" просмотрели более 15 000 человек.

Мне не хотелось бы, чтобы арцахцы воспринимали Виктора Коноплева лишь в аспекте поэта, пишущего про Арцах и Армению. Как сказал сам поэт, "Я разноплановый, такой, какой я есть...". На портале "Наша среда" у каждого читателя есть прекрасная возможность ознакомиться с творчеством русского поэта Виктор Коноплев.

*Поговори со мной, пока я есть,*

*пока я в радости живу, печалью,*

*что правду закрывала часто лезть*

*и состраданье превращалось в жалость.*

*Поговори со мной, мне нужен звук*

*твоих речей порывистых и страстных.*

*Я на его волне, мой милый друг,*

*взлетал к созвездьям, обретая счастье.*

*Поговори со мной, верни назад,*

*когда внезапно из противоречий*

*меня магнитом притянул твой взгляд,*

*в то дивное мгновенье первой встречи.*

Очень приятная весть ждала Виктора Коноплева в этом году.

Указом Президента Республики Арцах Виктор Коноплев награжден медалью "Благодарность".

Спасибо Вам, Уважаемый Виктор, что Вы рядом с нами!


Арцахский народ ценит Вашу любовь к нам!

**Стелла АРАКЕЛЯН**  
Учительница рус. языка и литературы школы № 3



ԿԻՄ ԲԱԿԵԻ

ԳԵՐՎԱԾ ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՐ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹՈՎ



«Չպարտա- նում ենք մեր բարեկամներին» ծրագրի հաջորդ հասցեն Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 դպրոցն էր: Գյուլիստանի ողջույնի խոսքով դիմավորեց դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանը:

«Մենք պարտավոր ենք բարձր պահել հայ-ռուսական բարեկամությունը և կարողանանք այն պես անել, որ երկու ժողովուրդների միջև համագործակցության դաշտն ավելի ընդլայնվի, կարողանանք գնահատել, արժևորել մեծագույն մարդկանց», -ասաց նա: Ներկաները ծաղիկներ խոնարհեցին փառքի սրահում՝ ճահատակների հիշատակի առաջ, այնուհետև ներկայացան դպրոցի ռուսաց լեզվի մեթոդիկավորման նախագահ Քրիստինե Գրիգորյանի՝ մեծանուն հայաստրին՝ Կիմ Բակչիին նվիրված հուշ-դասին: Ամեն ինչ սկսվում է սիրուց:

Մարդը, որը կես դար իրեն նվիրել է Հայաստանին, հայ ժողովրդի պատմությանը, մշակույթի, կրոնի ուսումնասիրությանը, արել է ոչ թե արյան կանչով, այլ սիրուց: «Ռուսաստանը մեծ երկիր է, նա առանց ինձ էլ գլուխ կհանի իր խնդիրներից, իսկ ես իմ ուժերի ներածին չափ կարող եմ օգնել փոքրիկ Հայաստանին»,- այսպես է իր համար որոշել շատ տարիներ առաջ ռուս ճանաչված գրող, իրապարակախոս, կինոդրամատուրգ Կիմ Բակչին՝ կենսագրությունը ընդմիջող կապելով հայոց երկրի և նրա ժողովրդի հետ: «Երբ 50 տարի շարունակ հնարավորություն ես ունեցում վերադառնալ այնտեղ և մտքով ապրում ես հայ ժողովրդի հետ, չես կարող անտարբեր լինել նրա նկատմամբ: Ես ինձ հայ չեմ զգում, բայց զգում եմ մեկը, որն անկեղծ սիրում է այդ ազգին», - ասում էր Բակչին: Անգնահատելի է նրա ավանդը հայագիտության մեջ: «Հայկական միջնադարյան ծեղագրերի բացառիկ գիտակ Կիմ Բակչին դրանց մեջ թափանցել է պատմաբանի խորագիտակությամբ, մշակութաբանի վարպետությամբ, գեղանկարչի գունազգացողությամբ, պոետի ոգեշնչվածությամբ, և որ ամենակարևորն է՝ սիրով»,- ասել է Սիլվա Կապուտիկյանը: Ու դա հենց սեր էր, ոչ թե թեթև սիրահարվածություն: Այդ սերը կյանք է տվել թանգարանային ծեղագրերին ու տաճարներին, մանրանկարներին ու գարդանախշերին և հասկանալի է դարձրել Մխիթար Գոշին իր հեռավոր 12-րդ դարից, Գրիգոր Մագիստրոսին՝ 11-րդ դարից:

Հայկական հողը հնուց ի վեր քաշել-ծգել է և շատ նշանավոր պոետների ու գրողների ու նրանց ոգևորության աղբյուրն է եղել: Ինչ վերաբերում է Կիմ Բակչիին, նրա նվիրվածությունը Հայաստանին ոչ մեկի հետ համեմատելի չէ: Կիմ Նաունովիչը գիտեր բոլոր հին ծեղագրերի պատմությունը՝ որտեղ էլ որ դրանք գտնվելիս լինեին:

Դասը նվիրված էր այդ զարմանահարաշ մարդուն:

Կիմ Բակչին առաջին անգամ Հայաստան եկավ, երբ Ցեղասպանության 50-րդ տարելիցն էր: Վերջապես փլուզվել էր լռության պատը, որ ստեղծվել էր հրեշավոր ողբերգության շուրջը խորհրդային տարիներին: Համաժողովրդական առաջին հուզումներն էին տեղի ունենում: Հայաստանի ժողովուրդը պահանջեց ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Ծիծեռնակաբերդի շինարարությունը սկսվեց հենց 1965թ.: Կառուցել են լուռ, բայց շտապով, հուշարձանն արտացոլում էր ոչ միայն հայ ժողովրդի վիշտը, այլև խորհրդանշում էր վերածնունդը: Կիմ Բակչին երևան եկավ այդ նշանակալից տարում՝ Ցեղասպանության 50-րդ տարելիցին:

1954թ. նա ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը: Գրական գործունեությունը սկսել է 1957թ.: Փոքրիկ ակնարկներով և պատմվածքներով: Իր հետագա ստեղծագործությունը գրեթե լրիվությամբ նվիրել է հայկական մշակույթի ուսումնասիրությանն ու քարոզմանը: Հայաստանի

հետ ծանոթությունը, և ինչպես պարզվեց շուտով, ընդմիջող սիրահարվածությունը նրա հորին ու մշակույթին տեղի է ունեցել 1960-ական թվականներին: Բակչին եկավ Երևան ու սկսեց ուսումնասիրել Մատենադարանի ծեղագրերը, մեկնեց Իտալիա և Վենետիկի սուրբ Ղազար կղզում հայտնաբերեց անսպառ նյութ:

Կիմ Նաունովիչը եղավ աշխարհի այն բոլոր վայրերում, որտեղ կան հայկական ծեղագրեր՝ Փարիզում, Լոնդոնում, ԱՄՆ-ում, Լիբանանում, Սիրիայում, Իրանում, որտեղ շատ են հայկական եկեղեցիները:

Չեղագրությունը հայկական հին մշակույթը՝ բնիկ մոսկվացի Կիմ Բակչին ցանկանում էր մի հարցի պատասխան ստանալ՝ ինչու հայերը պահպանվել են, երբ նրանց ժամանակակիցները՝ ասորիները, բաբելոնացիները, անհետացել են իրենց պետությունների հետ. չէ՞ որ հայ ժողովուրդը հարյուրամյակներ շարունակ գրկված է եղել պետականությունից, բանակից:



Հայաստանն ուսումնասիրելը Կիմ Բակչին թույլ տվեց սեփական տեսությունն առաջ քաշել հայերի մշակույթի մասին. ինչպես է գիրքը փրկել ժողովրդին: «Հայ ժողովրդի ինքնապահպանման բանաձևը սա է՝ լեզու, հավատ, կրոն, պատմություն և մշակույթ: Ահա այն հիմնական խարիսխը, որին կառչում է եղել հայ ժողովուրդը, ինչի շնորհիվ նա պահպանվել է: Պետության խղճուկ վիճակը բնավ չի նշանակում, թե այն պետք է ուղեկցվի մշակույթի ցածր մակարդակով, դրա համար էլ հայկական մշակույթի ճգնաժամի համար անհանգստանալու առիթ չի եղել,- կարծում էր Բակչին:- Դրա վրա արտահայտություն կարող է ծառայել 13-րդ դարը: Սկզբում այնտեղ տիրում էին թուրք-սելջուկները, ապա՝ մոնղոլ-թաթարները: Նրանք ավերե-



ցին Անի քաղաքը, կոտորեցին Կարսի բնակչությանը: Բայց դրա հետ մեկտեղ 13-րդ դարը հայկական դասական ճարտարապետության դարն է: Այդ ամայության մեջ մարդիկ կարողացան պահել այնքան սեր և համբերություն, որ ողջ Հայաստանը ծածկեն հոյակապ վանքերով», - ասում էր Բակչին:

Ահա այսպես, հայ մշակույթի մշտական բացահայտման ու պատմությունների մեջ է անցել Բակչիի երկար ու հարուստ կյանքը:

Կիմ Բակչին Հայաստանին նվիրված բազմաթիվ գրքերի հեղինակ է. «Արծիվ և սուր», «Ճակատագիր և քար», «Սուրբ Ղազարի հարությունը», «Սառնակած ժամանակ», «Մեր աշխարհը նման է անիվի», «Մենաստանից՝ սիրո մասին»:

Ահա մի քանի հատված նրա «Մենաստանից՝ սիրով» էսսեների գրքից. «Թռչում եմ Երևան չգիտեմ որտեղ անգամ, հավանաբար՝ հարյուրերորդ և արդեն Մոսկվայի օդանավակայանում տեսնում եմ խիտ սևահոն, սևահեր, աղմուկոտ ամբոխի: Ես լսում եմ հայերեն խոսքեր, և

սիրտս թարթում է սիրուց»:

«Մի քանի անգամ ես եկա իմ հին ավտոմեքենայով: Մենք նայեցինք իմ վանքերը, լսեցինք տաճարների կամարներից եկող խուլ ձայնը: Գիշերում էինք գյուղերում: Երեկոները երբ ցրտում էր, մտտում էինք Ձանգեզուրի կամ Շիրակի մի անկյունում, խմում թան կամ գինի, զրուցում տանտերերի հետ: Եվ գտնվում էր մեկը, ով լուսավորում էր ինձ, պատմում էր տեղի վանքերի մասին, հետո գրույց ինքնաբերաբար անցնում էր հայ ժողովրդի պատմությանը: Ես համոզված եմ, որ մենք պետք է նրանցից օրինակ վերցնենք շատ բան: Օրինակ՝ անգամ ամենահասարակ հայն անպայման պատկերացում ունի իր պատմության մասին՝ թող անգամ ֆանտաստիկ և ոչ ճիշտ: Բայց այն զգացումը, թե քո թիկունքին մի ամբողջ պատմություն կա, կուզենայի, որ մեր երիտասարդությունն էլ ունենար»:

Իսկ առավոտյան շրջում էի տան բակում կամ տնամերձում և հիանում տանտերերի ստեղծած կոկիկությամբ ու մաքրությամբ, որոնք կամ շինություն են սկսել, կամ սիրով այգին են մշակում: Այդ աշխատասիրության համար էլ սիրում եմ հայերին»:

Կիմ Բակչիի սցենարով նկարահանվել են ավելի քան 50 վավերագրական և գիտահանրամատչելի ֆիլմեր, որոնցից մի քանիսը, այդ թվում՝ քսան սերիանոց «Մատենադարան» հեռուստատեսային ֆիլմը, արժանացել են միջազգային և տարածաշրջանային մրցանակների: Հայ-ռուսական բարեկամության և մշակութային կապերի զարգացման ու ամրապնդման երկարամյա բեղմնավոր գործունեության համար Բակչին արժանացել է ՀՀ պետական մրցանակի, Հովհաննես Թումանյանի անվան, Հայաստանի գրողների միության և այլ մրցանակների: Ռուսաստանի հայերի միությունը Կիմ Բակչիին պարգևատրել է Ոսկե խաչով: Բակչին առաջին ոչ հայ գրողն է, որն արժանացել է Լևոն Սկրտչյանի անվան պատվավոր պարգևի, իր կապակցությունը Հայաստանին նա անվանել է «Բայրոնի էֆեկտ»:

Ֆիլմն ամբողջ աշխարհին ցուցադրեց մեր մշակույթը: Յուրաքանչյուր սերիայում հեղինակը հանդիսատեսին տեղափոխում է դարից դար, կայսրություններ, դարաշրջաններ:

Կիմ Բակչին առանձնահատուկ վերաբերմունք ուներ Արցախի նկատմամբ, որի հետ կապված էր խոր բարեկամության և հարգանքի զգացումով: Նա Արցախի մասին արժեքավոր մի շարք աշխատությունների հեղինակ է, ակտիվ աշխատանք էր տանում մեր երկիրն աշխարհի տարբեր անկյուններում ներկայացնելու ուղղությամբ:

Նրա վերջին գիրքը՝ «Արցախի հոգևոր գանձերը», 2015թ. թարգմանվել է հայերեն: «Իմ գրքերը թանկ են ինձ համար, բայց վերջինը՝ առանձնապես: Նրանում ամփոփված են բնության, Արցախի եզակի հուշարձանների նկարները», - գրում է Բակչին:

Հին ծեղագրերի համար կարևոր է ոչ միայն տեղը, որտեղ ստեղծվել են, նաև այն տեղը, որտեղ պահպանվում են, փրկվել են թշնամուց: Այդ իմաստով Արցախը բացառիկ է: Շատ ծեղագրեր, այդ թվում՝ նրանք, որ Մատենադարանի հպարտությունն են, դարերի ընթացքում պահպանվել են Լեռնային Ղարաբաղի անմատչելի վանքերում:

Կիմ Բակչին Արցախում հայտնվեց միայն 1990-ական թվականների երկրորդ կեսին՝ Արցախյան ազատագրական պայքարից հետո: Հայտնվեց և տառաջիորեն սիրահարվեց նրան: «Ես ուզում եմ, որ Ղարաբաղի մասին ճշմարտությունը հասնի ամբողջ աշխարհին,- ասում էր Բակչին,- որպեսզի մարդիկ իրենց համար բացահայտեն ոչ թե պարզապես փոքրիկ, այսպես ասած, չճանաչված հանրապետությունը, այլ հոգևոր գանձերով լի մի ողջ աշխարհ»:

Բակչին համոզված էր, որ այն ժողովրդին, որն ունի հզոր մշակութային ժառանգություն, հաղթել հնարավոր չէ: Իսկ երեխաները, ինչպիսիք են այս դասի մասնակիցները և Արցախի բոլոր երեխաներն առհասարակ, հենց նրա ամենահզոր մշակութային արժեքն են:

Իրենց հանդիպումների ու դասից ստացած

տպավորությունների մասին պատմում են հյուրերը:

Վիկտոր ԿՈՆՈՂՅՈՎ, ռուս բանաստեղծ.



- Ես հիշում եմ Կիմ Նաունովիչի հետ իմ առաջին հանդիպումը Երևանում: Նա պետք է գար Արցախ՝ Ռուսական խոսքի օրերին մասնակցելու, բայց հիվանդացավ ու չկարողացավ: Ես պատմեցի, որ հրաշալի միջոցառում էր, նվիրված էր իրեն: Շատ ուրախացավ: Նա խորաթափանց, հոգով էր ընդունում մյուսներին: Ես շատ էի ուզում իմանալ նրա մասին, բայց նա ավելի շատ խոսում էր ուրիշների մասին: Ես իմանում էի նրա մասին ուրիշների մասին իր պատմածներից, թե ում հետ է հանդիպել, ինչ տպավորություն է թողել իր վրա, ով է իրեն օգնել: Շատ ջերմությամբ էր խոսում Ռուբեն Ալեքսանդրովիչի մասին: Կիմ Բակչին ոչ միայն խորաթափանց մտածող էր, այլև առաջին հերթին մեծատառով մարդ: Նա շատ համեստ էր, այնքան ինտելիգենտ, որ երբ առաջարկում էին հարցազրույց տալ կամ պատմել իր մասին, ասում էր՝ ահա իմ գրքերը, կարդացե՛ք և իմացե՛ք:

Սիրելի՛ երեխաներ, շնորհակալություն ձեզ այս դասի համար: Ռուսաստանում նրա մասին քիչ գիտեն, կարծում եմ՝ ժամանակի ընթացքում նրա անձի մեծությունն ավելի կհասկացվի, և ըստ արժանվույն կգնահատվի:

Ռուբեն Օսիպով, ԱՅ ԿԳՄՆ ռուսաց լեզվի գլխավոր մասնագետ, տեսուչ:



- Ես բախտ եմ ունեցել մի քանի անգամ ուղեկցել տարանդավար մարդուն՝ Կիմ Նաունովիչ Բակչիին: Երբ նա իմացավ, որ ես վերադարձել եմ իմ մասնիների հայրենիքը, ասաց. «Հիմա ես թե՛ք կծանոթացնեմ իմնավոր Արցախին»: Եվ ինձ ցույց տվեց վանքերը, եկեղեցիները, հոյակապ խաչքարերը: Պետք էր տեսնել, թե ինչպես է վերաբերվում խաչքարերին. նրա աչքերը վառվում էին, ինչպես էր գրկում վանքերի այդ պատերը... Ես նրա կողքին ինձ զգացի իսկական հայ, քանի որ իմ ժողովուրդն այդքան հարուստ պատմություն ունի: 2014թ. նա Ռուսական խոսքի օրերի պատվավոր հյուրն էր: Մասնակցեց դպրոցներում կազմակերպված միջոցառումներին և հարցազրույց տալով՝ ասաց, որ Արցախում կրթության և գիտության նախարարությունը, դպրոցների տնօրենները, ուսուցիչները, աշակերտները ռուսաց լեզվի իսկական հայրենասերներ են և անում են ամեն ինչ՝ պահպանելու ռուսաց լեզուն: Ըստ իս, ամենաբարձր գնահատականն է՝ տրված նման հանճարեղ մարդու կողմից: Ես կուզեի, որ մեր մատաղ սերունդը միշտ հիշի Կիմ Բակչիի այս խոսքը. «Նա, ով սիրում է մեկ այլ ժողովրդի, դրանով իսկ պաշտպանում է իր երկրի պատիվը»: 50 տարի նա հայերի կողքին է եղել, և դա նրա համար սուրբ գործ էր: Նա ունի այսպիսի տողեր, և մենք դրանք կհիշենք ընդմիջտ. «Բարեկամների մասին խոսում եմ բարձրաձայն, ոչ թե շշուկով»:

Այսօր չեմ կարող չհիշել մեր վերջին հանդիպումը: Նա երկի զգում էր, որ վերջին անգամ է Արցախում: Եվ ինձ ասաց. «Ես երախտապարտ



### ԳՐԱԿԱՆ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ

են, որ ծանոթացել են քեզ հետ, Ռուբեն, շնորհիվ Արցախի: Ես ուրախ եմ, որ այստեղ է գալիս Վիկտոր Կոնոպլովը, որ նա սիրում է Արցախն ու Հայաստանը: Նա հիացմունքով էր խոսում Գրիգորի Գաբրիելյանցի մասին: Եվ պատահական չէ, որ կտակում գրել է, որ իր աշխարհային խորի կետը ցրեն նրա տան վրա, կետը՝ Գառնի-Գեղարդի: Հայ ժողովրդի իսկական ընկեր պիտի լինել՝ այդպիսի կտակ գրելու համար:

*Գրիգորի Գաբրիելյանց, ԼՂԴ նախագահի խորհրդակալ:*



- Իմ խոսքը ես կսկսեմ ոչ թե Կիմ Բակշիի ծննդյան օրից, այլ հուղարկավորությունից: Մոսկվայում այս տարվա մարտ ամսին տեղի ունեցավ Բակշիի հուղարկավորությունը: Ես մասնակցել եմ դրան և ասել հետևյալ խոսքերը. երբ մարդ հեռանում է այս կյանքից, ասուն ենք, որ նա գնաց մեկ ուրիշ աշխարհ: Իմ տեսակետով այդ աշխարհը մարդկանց հիշողությունն է: Եթե մարդ հեռանում է՝ մնում է մարդկանց հիշողության մեջ, նշանակում է՝ նա չի հեռացել, ողջ է, մարդկանց մեջ է: Նրա մտքերը փոխանցվում են մյուս սերունդներին: Եվ նա մնում է այս աշխարհում: Ու ահա այսօր ես համոզվեցի, և դա մեծ ուրախություն է, որ Բակշին այս երեխաների աշխարհում է, այս դպրոցի, ուսուցիչների աշխարհում: Դա ամենամեծ բանն է, որին նա հասել է:

Ինչպիսին լինեն մեր երեխաները, նույնպիսին կլինի մեր ժողովուրդը, այդպիսին կլինի հաջորդ սերունդը: Ես շատ ուրախ եմ, որ այս սերունդը կրթված է, գնահատում է գեղեցկությունը, գրականությունը, գիտի լեզու: Այս ամե-

նը տեսնելուց հետո ուզում եմ պատմել Կիմ Բակշիի հետ իմ բարեկամական կապերի մասին:

Պատահական չէ, որ նա կտակել է իր աշխարհային ամենամեծ շահ տալ այն տան վրա, որտեղ նա շատ անգամ է եղել: Ոչ թե նրա համար, որ դա իմ տունն է, այլ որ՝ իր սիրելի Արցախի մի մասնակց է: Դա կարող էր լինել ցանկացած մարդու տան հետ, ես չեմ ուզում դա կապել իմ անվան հետ: Պարզապես եզակի մի կիրճ է, որտեղից երևում է Ղարաբաղի համայնապատկերը: Բայց դա չէր ամենակարևորը մեր հարաբերություններում: Գլխավորը եղել է շատ վաղուց: Երիտասարդ տարիքում ես աշխատել եմ Կարակումում: Կարծում եմ, աշխարհագրությունից պատկերացում ունեք, թե ինչ տարածաշրջան է. 480 հազար քառակուսի կիլոմետր լեռն անապատ է, որտեղ գլխավոր երկրաբանն էր: 11 տարի աշխատելուց հետո ինձ տեղափոխեցին Մոսկվա: Այդ ժամանակ ես առաջին անգամ կարդացի «Արծիվ և սուր» գիրքը: Ու այն խորությամբ ներթափանցեց մեջս: Ես ոչ մի անգամ չէի եղել Հայաստանում: Եվ Հայաստանը զգացի նրա գրքի միջոցով: Ես իսկականից սիրահարվեցի: Երազում էի տեսնել այդ խաչքարերը, միջնադարյան ձեռագրերը, կանգնել Մատենադարանի աստիճանների վրա, տեսնել այդ մարդուն: Եվ մինչև իմ կյանքի վերջ սիրահարված եմ Հայաստանին ու Ղարաբաղին՝ իմ մայրնիսերի հողին: Ու այդ պատճառով եմ ես այստեղ եմ: Անկեղծորեն պետք է խոստովանեմ. ես որ իմա Ղարաբաղում եմ ապրում, որանում Կիմ Բակշի-ի դերն է նաև: Մեր հանդիպումներում ես հաճախ էի հարցնում. «Դու խազարների ժառանգորդն ես՝ ինչո՞ւ ես սիրում Հայաստանը, հայերին»: Իսկ նա թե՛ «Սիրեցի Հայաստանը, խազարից իմ մեջ ոչինչ չի մնացել: Ռուսաստանն այնքան մեծ է, այնքան մեծ էր ունի, որ եթե ես էլ նրա մասին գրեմ, չի հասկացվի և չի գնահատվի: Ես այնքան սիրեցի Հայաստանը, որ իմ պարտքն եմ համարում ամենից առաջ գրել ռուսերեն ոչ թե հայերի համար (նրանք հիանալի գիտեն իրենց պատմությունը, իրենց ձեռագիր մատյանները), այլ գրել ռուսալեզու ընթերցողի համար, ինչպիսին դու ես, իսկ քեզ մնաները շատ են: Եվ կարող է պատահել՝ դուք իմ գրքերի միջոցով սիրեք Հայաստանը»:

Սիրելի երեխաներ, ես շատ ուրախ եմ, որ

դուք գիտեք լեզուներ: Շատ կարևոր է մեր ժամանակներում լեզուներ իմանալը՝ հասկանալու, թե ինչ է կատարվում այս աշխարհում: Ես պաշտում եմ հայերենը, այն շատ գեղեցիկ է, հարուստ, պատկերավոր: Բայց եթե չիմանալի ռուսերեն, երկի մինչև վերջ չէի իմանա իմ մասնագիտության՝ հանքաբանության ներթափանցությունը:

Ես շատ ուրախ եմ, որ այս դպրոցում լավ են դասավանդվում լեզուները: Հոյակապ արտասանություն, հռետորություն: Ես հիացմունքով լսեցի ձեզ: Եվ այն տպավորությունն ունեմ, որ բոլորը տիրապետում եք հռետորական արվեստին:

Եզրափակելով խոսքը՝ Գ. Գաբրիելյանցն իր հեղինակած «Մարդը և քարերը» գիրքը նվիրեց դպրոցի գրադարանին՝ ասելով.

- Որևէ մեկը երբևէ մտածել է, թե ինչու շատ ժողովուրդներ անհետացել են պատմության թատերաբեմից, իսկ հայ ժողովուրդը, դաժան ճակատագիր ունենալով հանդերձ, մնացել է:

Ո՞րն են զավթիչները, բայց հայ ժողովուրդը կա: Որևէ մեկը մտածել է, թե ինչ դեր է ունեցել սրանում գիրքը: Պատճառներից մեկն այն է, որ մեր մայրնիսերը, պահպանելով գիրքը, փրկել են գիտելիքը: Երկրի տնտեսական, ռազմական, պետական-քաղաքական և մյուս զարգացումները կախված են գիտելիքից: Ոչ թե տեխնիկական միջոցներից, ոչ թե բերքատվության ծավալից, ոչ թե ռուսերից, ինքնաթիռների թվից, այլ գիտելիքից: Գիտելիքն տիրապետող մարդիկ ի վիճակի են ստեղծել ավելի լավը, քան կա այսօր: Եվ եթե ասեն, թե ինչի վրա միջոցները ներդրեն, ես համոզված կասեմ՝ գիտելիքի: Դիմում եմ ձեզ՝ կարչեցեք գիտելիքից, ձգտեք ոչ թե լսել, այլ ըմբռնել: Գիտելիքն ամենից լավ ստանում ենք դպրոցում, բարձրագույն կրթությունը հիմնարար գիտելիք չի տալիս, զարգացում է այն գիտելիքի, որում պետք է մասնագիտանաք: Դրա համար դիմում եմ ձեզ՝ սովորեք: Իմաստուն է ասված՝ սովորել, սովորել, սովորել: Ուսման միջոցով՝ դեպի ճանաչում: Մաղթում եմ ձեզ երջանիկ ապագա:

Ավարտվեց Կիմ Բակշիի լիրիկական ճանապարհորդությունը սուրբ վայրերով ու գեղեցկություններով: Բայց հեռանալով՝ նա մնաց մեզ հետ: Մեզ հետ մնացին նրա գրքերը, բացառիկ ֆիլմերը, անունը:

Այս հուշ-դասը ընդամենը մի մասնիկն էր այն սիրո, ջերմության և երախտագիտության, որ ի դեմս հ.2 դպրոցի աշակերտների և ուսուցչուհի Քրիստինե Գրիգորյանի՝ արցախցիները տաժում են մեծ հայասերի հանդեպ:

Արցախը բարձր է գնահատում Կիմ Բակշիի գործունեությունը: «Երախտագիտություն» մեդալը բոլոր արցախցիների վերաբերմունքն է ամփոփում:

«Այս իմ մասնակով և վերջին կամքով և մեկ անգամ ես հաստատում եմ իմ անփոփոխ սերը Հայաստանի, Արցախի նկատմամբ, որը հաստատել եմ 50 տարի ծառայելով հայ ժողովրդին», - գրել է Կիմ Բակշին իր կտակում:

#### Սվեդլանա ԽԱՉԱՏՐԻԱ

### ШУШИ

Полководец Суворов сражался без страха, ведь его предки были из Арцаха. Бабка Суворова была из Шуши И воспитала его от души. Все великие Герои из России, которые храбро сражались с фашистами, тоже были из Шуши. Шуши, мы любим тебя от души! Не отдадим тебя врагу, а если придется, возьмем и Баку. Прости нас Господи и нашего врага, мы лишь хотим мира и защищать свою страну. Нам чужого не надо, а свои земли ни за что не отдадим, любой ценой за нее постоим. А если придется, то и жизнь отдадим. Все равно, мы победим. Ведь сердце Арцаха - это Шуши. Мы должны ее любить и беречь всегда!!!

Зулейха (Зиба) ХАЧАТՐԻԱ

## ВЕЛИКИЙ, МОГУЧИЙ РУССКИЙ ЯЗЫК

В нашем обществе существует множество разнообразных мифологических ("не соответствующих реальной действительности") представлений, которые, однако, укоренились в сознании людей весьма прочно. Немало мифологических представлений относится и к такому феномену, как русский язык. Речь, разумеется, идет не о частных вопросах, касающихся, например, происхождения, правописания или произношения того или другого слова. А в осмыслении вопросов о том, 1) для чего существует язык; 2) как, почему и для чего он, хотя и довольно медленно, изменяется и насколько такие изменения могут быть сознательными; 3) какие цели стоят перед человеком, изучающим свой родной язык, и какова иерархия этих целей.

На самом деле язык - это не самоценная система, но система обозначений действительности. Она требует изучения не сама по себе, но в первую очередь в качестве средства, способного назвать факты, явления, свойства, процессы, имеющие место в действительности.

Язык - это система знаков. А знак, как известно, непременно обладает по крайней мере двумя сторонами: формой и содержанием. И если форма языковых знаков - это, прежде всего,

звуки (для устной речи) и буквы (для письменной), то содержание языковых знаков - это окружающая нас действительность. Причём включающая в себя не только то, что можно воспринять органами чувств, но и представления людей об этой действительности, её оценку, человеческие фантазии и т. п. Отсюда вывод: чем больше феноменов и аспектов действительности может обозначать тот или иной язык, тем лучше для людей, пользующихся этим языком. Иначе: чем больше в языке различных по значению слов, тем лучше. Таким образом, язык можно сравнить с зеркалом, отражающим некоторое пространство.

Во всем мире на русском языке говорят около двухсот шестидесяти миллионов человек, и мы искренне гордимся тем, что принадлежим к этому числу

*Что русский язык - один из богатейших языков в мире, в этом нет никакого сомнения.*

**Белинский В. Г.** Недавно я с удивлением узнала, что в церковнославянском языке, в языке, на котором говорили на Руси ещё в средние века, кроме единственного и множественного числа существовало двойственное число! Причём числа в этом двойственном числе могли состоять из множеств!

Это показывает, что ещё в

средние века русские очень хорошо разобрались в двойственности этого мира, а следовательно, и в его законах. То есть проблем во взаимоотношениях друг с другом и с миром у нас не было или их было значительно меньше, чем сейчас. Почему? Потому что библейские заповеди и законы морали, которым стараются следовать общество в наше время, выводятся из Законов, действующих в двойственной вселенной. Зная, что такое двойственность, понимая и переживая её, мы автоматически познаём законы морали и сам Нравственный закон. Тогда ваши отношения с миром и людьми становятся по-настоящему гармоничными. Язык - это тело и душа народа. Если из языка неведомо как и незнамо по чьей воле исчезает целый раздел грамматики, отвечающий за взаимоотношения и связь с миром, это означает, что часть души этого народа погрузилась в сумерки и неведение. Я специалист по русскому языку поэтому очень люблю его, но как армянка, обожающий свой народ, я бы сказала: свой великий народ для меня конечно же основным, главным, первым остается мой родной язык - армянский, который испокон веков живет жил и будет жить как и мой народ.

## ՌՈՒՍԵՐԵՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՍԱՐԿԱՅԻՆ ԼԵՉՈՒ

*Քանի լեզու գիտես, այդքան մարդ ես:*  
(Ժողովրդական ասացվածք)

Ռուսերենը հնդեվրոպական լեզուների ընտանիքի արևելասլավոնական լեզվախմբի լեզու է:

Ռուսերեն խոսում է աշխարհում 278 միլիոն մարդ: Ամենատարածված սլավոնական լեզուներից է: Պետական լեզու է Ռուսաստանում, Բելառուսում, Ղազախստանում, Ղրղզստանում: Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական լեզուներից մեկն է, ինչպես նաև մի շարք եվրոպական և ասիական երկրների երկրորդ պետական լեզուն է:

Ըստ աշխարհի լեզուների դասակարգման՝ ռուսերենն զբաղեցնում է չորրորդ տեղը ամենաթարգմանվող լեզուների շարքում, յոթերորդ տեղը՝ այն լեզուների շարքում, որոնցով թարգմանվում է գրքերի մեծ մասը:

Արցախն այն հազվադեպ երկրներից է, որոնցում բնակչությունը երկլեզու է. հայերը դեռ փոքր ժամանակից տիրապետում են երկու լեզվի՝ հայերենին ու ռուսերենին: Ռուսերենը մտել է հայերի կենցաղը՝ դառնալով տեղեկատվություն ստանալու, արտաքին աշխարհի հետ շփվելու միջոց:

Հայկական դպրոցներում ռուսերենը դասավանդվում է պարտադիր կերպով:

Հայաստանում և Արցախում ռուսերենի դերը բարձրացնելու, ռուսաց լեզուն տարածելու համար կա բավականաչափ քաղաքական կամք, հետաքրքրություն, կա պահանջարկ, սակայն չկա կարիք եւ

ցանկություն՝ բացելու պարտադիր ուսուցման ռուսական դպրոցներ: «Ռուսաց լեզուն՝ որպես պարտադիր ուսուցման առարկա եւ առաջին օտար լեզու, սկսած երկրորդ դասարանից, անցնում են բոլոր հանրակրթական դպրոցներում այն դեպքում, երբ անգլերեն կամ այլ օտար լեզու անցնում են երրորդ դասարանից: Վերջին զարգացումները հաշվի առնելով՝ ռուսաց լեզվի պահանջարկը կա մեր քաղաքական, տնտեսական ոլորտներում: Ռուսերենի դերը մեծ է մշակութային հաղորդակցության համար, ռուս մշակույթին բնագրով ծանոթանալու համար: Սակայն պետք է նկատել, որ որևէ լեզու չի կարող մոնոպոլ դեր ունենալ այսօրվա պայմաններում: Պետք է հաշվի առնել այն պահանջարկը, որը կա օրելիով իրականության մեջ:

Կարելի է սովորել անգլերեն որպես երրորդ լեզու, ֆրանսերեն, սուահիլի, վիետնամերեն... Բայց ճիշտ կլինի, որ երկրորդ լեզուն լինի ռուսերենը:

Մենք պետք է ընդունենք ռուսաց լեզվի կարևորությունը և տարածենք այն: Վրաստանում ռուսաց լեզվի առաջ դրները փակեցին՝ բացելով դրանք անգլերենի առաջ: Բայց միևնույն է, այնտեղ անգլերեն այնքան լավ չգիտեն, որ կարողանան պրոֆեսիոնալ կրթություն ստանալ: Մի խոսքով, ռուսերենի առաջ դրները փակելը մեծ սխալ է: Նման սխալներ հայ ժողովուրդը երբեք թույլ չի տա:

**Նարինե ԲԱԲԱՅԱՆ**  
*Սվեդլ. Ա.Ղուլյանի անվան հ. 2 հ/դ ռուսաց լեզվի եւ գրականության ուսուցչուհի*

ՀՈԳԵՎՈՐ

ԶԱՏԻԿԻ ՏՈՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Ուսուցման համակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից է սկսվում մանկան աշխարհաճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Այստեղ է ձևավորվում նրա վերաբերմունքը աշխարհի, մարդկանց, շրջապատի և գեղեցկության նկատմամբ: Այստեղ է, որ նրա մեջ սերմանվում են մարդուն այսօր այնքան անհրաժեշտ բարության առաջին հատիկները: Հայ երեխայի հոգում բարության և առաքինության առաջին սերմնացանը քրիստոնեության տարրական գիտելիքների ուսուցումն է:

Հայ երեխային հայեցի կրթությունն ու դաստիարակությունն այնքան են անհրաժեշտ, որքան մեսրոպյան այբուբենը՝ հայոց լեզուն իմանալու համար:

Երեխայի աշխարհընկալման, գեղագիտական ճաշակի ձևավորման տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային սովորույթները, ընտանեկան հանդիսությունները, տաղավար տոներին նվիրված ուշագրավ միջոցառումները:

Մեր մանկապարտեզում արդեն ավանդույթ է դարձել մեծ շուքով և խորհրդավորությամբ տոնել Սուրբ Զատիկը: «Ծիածան» խմբի երեխաները մեծ ուրախությամբ ու ավանդական արարողակարգով տոնեցին Քրիստոսի հարության՝ Սուրբ Զատիկի տոնը: Խմբի դաստիարակչուհի Գալինա Գասպարյանի խնդրանքով մանկապարտեզ էին այցելել Տեր Մինաս քահանան և Ռոբերտ սարկավազը:

Փոքրիկները ներկայացրին զատկական տոնը, պատմեցին զատկական ուտեստների մասին, ներկայացրին պատմություններ ժողովրդական սովորույթների մասին, փառաբանեցին Տիրոջը: Ասացին, որ տոնն ունի իր ավանդույթները: Դրանցից ամենազվախավոր ծու ներկելու արարողությունն է: Ձուն համարվում է հա-

խատանքները գրավեցին ներկաների ուշադրությունը: Միջոցառման ժամանակ պահպանվեց ծիսակարգը, և երեխաներն ընկալեցին դրա բովանդակությունն ու աստվածային խորհուրդը: Իմացան, որ Սուրբ Զատիկն ուրախության տոն է: Ստացան գիտելիքներ ազգային և կրոնական ծեսերի, մասնավորապես Սուրբ Զա-

պատրաստած ծիսական ծառը: Ծառից կախած գունավոր ձվերը բաժանեց ներկաներին: Մեծ ոգևորություն էր տիրում դահլիճում, և հրաշալի տրամադրությամբ էլ ավարտվեց միջոցառումը: Խմբի դաստիարակչուհիներ Գալինա Գասպարյանը, Կարինե Բաբայանը, երաժշտական ղեկավար Անուշ Աբրահամյանը և դաստիարակի օգնական Ջարինե Շահրամանյանը ջանք ու եռանդ չէին խնայել, որպեսզի երեխաների ամբողջ օրը՝ սկսած ժամանումից մինչև տունդարձ, հետաքրքիր ու հագեցած լինի թեմայի շրջանակներում կատարվող գործունեություններով:

Այս միջոցառումը երեխաների հուզաշխարհում դարձավ վառ հիշողություն, որը նրանց կուղեկցի ողջ կյանքի ընթացքում: Այն հայեցի դաստիարակության և կրթության, գեղագիտական, բարոյական, նաև պատմական՝ անցյալն իմանալու, գնահատելու և սովորելու տեսակետից հրաշալի դաս էր, որը հարստացրեց նրանց մանկական մաքուր ու ջինջ հոգիները:

Մենք՝ մանկավարժներս, պարտավոր ենք ըստ արժանվույն կատարել մեզ վստահված գործը, այսինքն՝ հայ մանուկներին դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար:

**Ռ. ԲԱՐՍՈՒՊՅԱՆ**  
**«Ստեփանակերտի թիվ 2 պեդագոգական մանկապարտեզ»**  
**ՊՈԱԿ-ի փոխարտըն**

Շնորհավորանք ՍԻՐՎԱԾ, ՎԱՍՏԱՎԱՆՍ ՌԻՍՈՒՋՈՒՇԻՆ



Կան մասնագիտություններ, որոնց աշխատանքի արգասիքը տեսնելու համար տարիներ են պետք: Այդպիսին է ուսուցչի մասնագիտությունը, որը շատերի համար կողքից դուրս է թվում: Սակայն նրանք, ովքեր անդամագրվել են այդ սուրբ գործին, լավ գիտեն, թե ինչ պատասխանատու, խոչընդոտներով լեցուն, միաժամանակ պատվաբեր գործ է: Դա աշխատանք չէ, դա վերուստ տրված կոչում է, և ամենքը չէ, որ ի գորու են կրել: Մեր այսօրվա բարդ ու հակասական ժամանակներում ովքեր կարողանում են շահել իրենց սաների վստահությունն ու սերը, երջանիկ արարածներ են: Ուսուցչին գնահատողն ու թեր պարգևները նրա սաներն են:

Աշանի Անիթա Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցում սեր ու հարգանք է վայելում ռուսաց լեզվի բանիմաց ուսուցչուհի Ջարինե Սարգսյանը, որի համար դպրոցը դարձել է հարազատ օջախ, իսկ սաները՝ հոգու ցավը փարատող, ուժ ու կորով տվող:

Ջ.Սարգսյանը ծնվել է 1959թ. Նորչենի հարգված ու սիրված մի ընտանիքում: Ուսումնառության ութ տարիներն անցել են հայրենի գյուղում, ապա ուսումը շարունակել է Աշանի միջնակարգ դպրոցում: Սանկուց երագել է դառնալ ռուսաց լեզվի ուսուցչուհի: Մանկության երազանքն իրականություն է դարձել: Սովորելով Բաքվի Ախունդովի անվան մանկավարժական ինստիտուտում՝ ստացել է ռուսաց լեզվի ուսուցչուհու դիպլոմ և կրկին վերադարձել հայրենի լեռնաշխարհ: Ուսուցչական մկրտությունը ստացել է Գյումե ճարտարի միջնակարգ դպրոցում, իսկ 1979թ. սեպտեմբերից աշխատանքի է անցել Աշանի միջնակարգ դպրոցում: Առաջուր աշխատում է նույն դպրոցում: Նորչենից Աշան ձգվող ճանապարհը երբեք Ջարինե Սարգսյանին չի հոգնեցրել: Նա միշտ էլ սրտի տրոփյունով է մտել դասարան և յուրաքանչյուր աշակերտի մեջ տեսել իր հարազատին: Պատահական չէ, որ նրան բոլոր սաներն էլ սիրում են ու նրա մեջ տեսնում իրենց մորը:

Թավրում մի աղջնակ էր, երբ մտավ դասարան: Ինչպես՝ անցան տարիները, և դարձավ 60 տարեկան...

Ժամանակը կանգնեցնել հնարավոր չէ, բոլորն էլ դառնում են ժամանակի կրողը:

Սիրելի՛ Ջարինե Սուրիկի, Աշանի միջնակարգ դպրոցի ուսուցչական կոլեկտիվը շնորհավորում է Ձեզ՝ որպես այդ կոլեկտիվի լավ ուսուցչուհի, ընկերուհի, ընտանիքի կին և հոգատար մայր: Թող Ձեր ապրելիք տարիները լինեն անհոգ, անցնեն անամպ երկնքի ներքո: Ձեզ արևաշատություն, նորանոր բարձունքներ...

*Աշանի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ*



րության և նոր կյանքի սկզբնավորման խորհրդանիշ, իսկ կարմիր գույնը խորհրդանշում է խաչյալ Հիսուսի կենդանարար արյունը: Նշեցին, որ ամենասիրած ավանդույթներից մեկն էլ ձվակռիվ խաղն է: Մենք ներկում ենք ձուն կան էլ զարդարում տարբեր կերպ՝ ձգտելով, որ այն գեղեցիկ լինի: Երեխաները հանդես եկան Քրիստոսի հարության մասին ներկայացմամբ, երգեցին ու ասմունքեցին: Դահլիճի կենտրոնում սեղանների վրա դրված ձեռքի աշ-

տիկի մասին: Միմյանց ավետեցին՝ «Քրիստոս հարյավ ի մեռելոց»: Պատասխանը եղավ՝ «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:

Միջոցառումն ավարտվեց Տերունական աղոթքով: Օրհնության խոսքով հանդես եկավ Տեր Մինաս քահանան և ներկաներին շնորհավորեց տոնի առթիվ: Նա կարևորեց այդպես էր երեխաներին քրիստոնեական արժեքներին հարողակից դարձնելը: Դաստիարակչուհին խնդրեց օրհնել իր

ԼՈՒՍԱՎՈՐ ՍՈՒՐԵ ԶԱՏԻԿ

*Քրիստոս հարյավ ի մեռելոց... Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի...*

Հայ Առաքելական եկեղեցին ամեն տարի մեծ շուքով նշում է Քրիստոնեական հինգ տաղավար տոներից ամենամեծ ու ամենասիրված տոնը՝ Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունը, որն ընդունված է ամվանել Ջատիկ: Քրիստոսի հրաշափառ Հարությունը մի նոր առիթ է վերանորոգվելու, վերարժևորվելու և ուխտվելու: Մարդու հոգևոր վերածնության այդ տոնին էր նվիրված Ստեփանակերտի հ.1 պետական մանկապարտեզում (տնօրեն՝ Ժաննա Ջաբարյան) «Արևիկ» խմբի դաստիարակչուհի, 2014թ. «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի հանրապետական փուլում հաղթող ճանաչված Ժաննա Մարգարյանի երևակայության ու մտահղացման արդյունքում կազմակերպված միջոցառումը: Դաստիարակչուհին և նրա սաները մեծ ոգևորությամբ էին պատրաստվել Սուրբ Զատիկին:

աղոթք են հղում առ Աստված և բարի լուրի ավետիսով ողջունում ներկաներին.

- Քրիստոս հարյավ ի մեռելոց...
- Ձեզ և մեզ մեծ ավետիս...
- Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի...

Այնուհետև երեխաները ներկայացրին տոնի խորհուրդն ու նշանակությունը: Նրանց շուրթերով մեկնաբանվեց «զատիկ» բառի իմաստը, որ նշանակում է զատվել, հեռանալ անմաքուր խորհուրդներից և դառնալ բարի, նշանակում է հեռացում մեղքերից և վերադարձ առ Աստված:



Մեկնաբանվեցին նաև ծլեցված հացահատիկի, ձուն ներկելու, լավաշի և գինու օգտագործման խորհուրդները: Երեխաները ոչ միայն սովորեցին, այլև սովորեցրին, թե ինչպես պետք է տոնել Քրիստոսի Հարության տոնը՝ սկսած եկեղեցական ծիսակարգերից մինչև ազգային սովորույթներ, ինչպես և՛ ինչ կերակրատեսակներ պատրաստել:

Դաստիարակչուհին նրբանկատորեն փոքրիկներին ներգրավելով ընթացքի մեջ՝ տոնը վերածեց զվարճանքի: Երեխաները

ցուցադրեցին իրենց օժտվածությունն ու շնորհը: Փոքրիկների աղոթքները, հոգևոր երգերն ու պարերն ավելի պատկերավոր դարձրին տոնը: Նրանց գեղեցիկ կատարումները վերստին հաստատեցին կյանքի և հարության հաղթանակը, քանզի Քրիստոսը իր հարությամբ հաղթեց մահին՝ ի փրկություն մարդկանց: Ամենակարևոր փոքրիկների հոգու զվարթությունն էր ու մեծ հավատը: Նրանց հավատքի լույսը թափանցեց ներկաների հոգիները և պարուրեց ազնվության ու բարության շնչով:

Վերջում երեխաներին և ներկաներին շնորհավորանքի ու օրհնանքի ջերմ խոսք ասաց Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի ներկայացուցիչ Տեր Մինաս քահանան: Նա հույս հայտնեց, որ Հարության տոնով զորացված մեր Հայրենիքում մեզ մշտապես ուղեկից կլինեն Հույսը, Հավատը և Սերը, իսկ ի ծնե բարությանը լցված մանուկների սուրբ հոգիներում միշտ կլինի Տերունական աղոթքը: Թող որ Քրիստոսի սերը, զորությունը և խաղաղությունը լինեն բոլորի սրտերում և հոգիներում:

Զատիկի տոնը առիթ էր մեկ անգամ ևս գնահատելու մեր հոգևոր արժեքները: Այն նպաստեց փոքրիկների հոգևոր դաստիարակությանը, իսկ երեխաների ակտիվ ներգրավվածությունը միջոցառմանը և նրանց մոտ ստեղծված իմացական հիշողությունը միշտ նրանց կփիշեցնեն այդ ուրախ ու լուսավոր տոնի մասին:

**Էլմիրա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**  
**ԱՅ ԿԳՄՆ Նախադպրոցական կրթության բաժնի գլխավոր մասնագետ**

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

ԴԵՊՈՒ ՄԵՆ ՍՊՈՐՏ ԶԱՆԱՊԱՐԿԸ

Սպորտը զանգվածային դարձնելու համար մեծ նշանակություն ունի այն վաղ հասակից երեխաների մեջ արմատավորելը...

Փոխանցումավագը՝ արգելքների հաղթահարումով
Մրցավարի հրահանգով առաջին մասնակիցը վազքով մոտենում է պարկին...

Արդեն երկրորդ տարին է՝ Արցախում անցկացվում է «Լավագույն նախադպրոցական մարզական հիմնարկ» մրցույթը...

Խաղային փոխանցումավագը
Առաջին մասնակիցը (տղան) մրցավարի հրահանգով վազքով մոտենում է գուրգին...



մարզադահլիճում անցկացվեց համրապետական փուլը: Մասնակցում էր չորս թիմ. Ստեփանակերտից՝ հ.1 և հ.10 հիմնական...

արագ հանձնում է առաջին մասնակիցը աղջկան: Աղջիկը կատարում է վարժությունն առանց օղակի: Վազքով մոտենում է կանգնակին...

Անցում աթլետիկական արգելքների միջով

Չրահանգի համաձայն թիմերի առաջին մասնակիցները վազքով ոլորապտույտ անցնում են երեք գուրգերի միջով...



Վարժություն մանկական երկանիվ հեծանվով

Յուրաքանչյուր թիմի առաջին համարի երեխան մրցավարի հրահանգով երկանիվ մանկական հեծանիվը ոլորապտույտ վարելով անցնում է երեք գուրգերի միջով...

Օլիմպիական խորհրդանիշի հավաքում
Թիմի առաջին մասնակիցը՝ աղջիկը, մրցավարի հրահանգով ոլորապտույտ վազքով անցնում է մեկ ուղղությամբ դրված 5 կանգնակների (գուրգի) միջով...

Մրցույթի անցկացման ողջ պատասխանատվությունը ԿԳՍՆ-ի կողմից հաստատված մրցավարական հանձնախմբի վրա էր: Գլխավոր մրցավար՝ սպորտվարչության զանգվածային մարզական միջոցառումների և մարզակառույցների աշխատանքների համակարգման բաժնի պետ Լյուդա Գասպարյանի տեղեկացմամբ՝ «Լավագույն նախադպրոցական մարզական հիմնարկ» մրցույթի նպատակն է՝ անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, նախադպրոցական տարիքի երեխաների առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորում:

Խնդիրներն են՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակություն, առողջության ամրապնդում, նրանց ֆիզիկական որակի բարելավում, նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչություն, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում, նախադպրոցական տարիքի երեխաների համար ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի գերազանցումը համար նպաստավոր պայմանների ստեղծում, նախադպրոցական հիմնարկներում ֆիզկուլտուրային-առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպման աշխատանքների խթանում:

Թիմի կազմում ընդգրկված էին 5 տղա և 5 աղջիկ: Մրցույթի ծրագիրը ներառում էր հինգ վարժություն:

մակին, օղակը կախում վահանակի վրա կախված կախիչից՝ համապատասխան գույնի վրա (կապույտ օղակը՝ կապույտի, սևը՝ սևի, կարմիրը՝ կարմիրի, դեղինը՝ դեղինի և կանաչը՝ կանաչի վրա) ու արագ վերադառնում մեկնարկային գիծ՝ ձեռքի հպումով էստաֆետը հանձնելով հաջորդ մասնակցին՝ աղջկան: Վարժությունը նույնությամբ կատարում են թիմի բոլոր անդամները՝ մինչև օլիմպիական խորհրդանիշի հավաքում:



հանգամանակից ներկայացնելը մեկ նպատակ ունի՝ ցույց տալ, որ այն իրականացնելու համար մարզական բարդ գույք չի պահանջվում: Բոլոր տեղերում, եթե դրանք անգամ բացակայում են, կարելի է ինքնաշեն ունենալ, միայն թե ցանկություն և ծգտուն լինի: Այն հարցին, թե ինչու է հանրապետական փուլին ընդամենը չորս թիմ մասնակցում, մրցույթի կազմակերպիչները մեկ պատասխան ունենին՝ տեղերում աշխատանք չեն տարել, մասնավորապես շրջանային սպորտի մասնագետներն անհրաժեշտ հետևողականություն չեն ցուցաբերել: Իսկ այն խանդավառությունը, որ տիրում էր մրցույթի ժամանակ Ստեփանակերտի հ.1 դպրոցի մարզադահլիճում, անհնար է նկարագրել: Թվում էր՝ մարզական մեծ մասշտաբի միջոցառում է, այնքան մեծ էր ոգևորությունը: Յուրաքանչյուր երեխայի մրցելույթ ուղեկցվում էր նրա հետ եկած ծնողների, ուսուցիչների, մյուս հանդիսատեսների խթանիչ բացակասություններով: Թվում էր՝ մրցողները ոչ միայն երեխաներն են, այլև մեծերը: Ամեն վարժությունից հետո հաղթած թիմի երեխաները հայտնվում էին մեծերի գրկում, կամ նրանց ողջունում էին հաղթական ծեստով: Չմարավոր չէր անտարբեր դիտողի դերում մնալ այդ ընդհանուր խանդավառության մթնոլորտում: Ուղղակի ամփոստում ես, որ մեծերի պատճառով մարզական այդ ոգևորությունից անմասն են մնացել մեր որոշ նախադպրոցական հիմնարկների երեխաներ:

Ինչ որ է, մրցավարական խումբը վարժությունների արդյունքներով որոշեց մրցանակային տեղեր գրաված թիմերին: 1-ին տեղը զբաղեցրեց Ստեփանակերտի Խ.Աբովյանի անվան հ.1 հիմնական դպրոցի նախադպրոցական խմբի երեխաները: 3-րդ տեղը՝ Մարտունու Սոնթե Մելքոնյանի անվան մանկապարտեզի թիմը: Մրցանակային տեղեր գրաված թիմերը պարգևատրվեցին համապատասխան գավաթով, դիպլոմով, անդամները՝ մեդալով, նվեր-քարով: Անկարագրելի էր երեխաների ուրախությունը: Նրանց կյանքում դա առաջին մեդալն էր: Չաղթած նախադպրոցականների դպրոցի տնօրեն ժամնա Բալայանը մեկ-մեկ համբուրեց սանիկներին, նրանց նվաճած գավաթն անցավ ձեռքից ձեռք. բոլոր երեխաները մի քանի վայրկյան պահեցին այն: Գուցե հենց այդ պահին են ծնվում մեր ապագա չեմպիոնները:

Մրցույթը մնում է մրցույթ, հաղթանակը մեկին է բաժին հասնում: Չաղթանակի բերրանք սպորտ մեծերի կողքին աննկատ չէր առաջին հորիզոնականում չհայտնված թիմերի մարզիչների տխրությունը: Մարտունու շրջանի Սոնթե Մելքոնյանի անվան մանկապարտեզի թիմի մարզիչը հենց սկզբից ուշադրություն գրավեց: 16

«ԵՐԱՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆ՝ ՈՐՊԵՆ ՀԱՅԵՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Հանրակրթական դպրոցներում, սկսած առաջին դասարանից մինչև յոթերորդ, աշակերտներն ուսումնասիրում են «Երաժշտություն» առարկան: Ի՞նչ է տալիս այն մեր սաներին: Հաճախ աշակերտներին թվում է, թե այս առարկան ուրախ ժամանցի, երգելու, պարելու, սեփական ստեղծագործությունը ներկայացնելու, հեշտ ընկալվող, ոչ մեծ պահանջներով դաս է: Մինչդեռ մեծ է նրա դերը ժամանակակից զարգացած ու լայն մտահորիզոնով մարդու ձևավորման, անցյալի լավագույն արժեքները պահպանելու գործում: «Երաժշտություն» առարկան շատ ավելին է տալիս, քան առաջին հայացքից թվում է. իհարկե, մեծ նշանակություն ունի նաև դասավանդող ուսուցչի վարպետությունը ուսուցման գործընթացում: Ինչպես ասում են՝ «Աշակերտն սպունգ է, ինչքան տաս, այնքան կներծծի»:

Երաժշտությունը սահման չի ճանաչում: Ինչ ազգի ստեղծագործություն էլ լինի՝ գեղեցիկ երգը լսելի է յուրաքանչյուր մարդու համար: Թեկուզ և խոսքերն անհասկանալի լինեն, մեղեդին ակամայից զգացնում է իմաստի մասին: Օրինակ՝ դուրսից նվազ լսելիս մարդիկ հուզվում են: Ինչո՞ւ, չէ՞ որ ոչ մի խոսք չի արտահայտվում: Բայց զգացվում է, որ մեծ ցավի մասին է պատմում:

Արդի ժամանակներում աշխարհի տարբեր երկրների ստեղծագործությունները հասանելի են յուրաքանչյուրին: Երաժշտության ուսուցիչը պետք է այնպես կազմակերպի դասը, որ նոր սերունդը, հրապուրված նորաձե երաժշտությամբ, չթուլացնի սերը դեպի ազգային երաժշտություն: Անհրաժեշտ է չլստրվելու նորագույնից, սահուն կերպով մեկը մյուսին միացվի, և լրացվեն երկուսն էլ, քանի որ ինչքան էլ հզոր ծառ լինի, եթե չունի հզոր արմատներ, ամեն անձնա թանուց կտապալի: Երաժշտության արմատներն էլ ազգային երաժշտությունն է, որի միջոցով աշակերտը կդառնա ավելի պիտանի մարդ հայրենիքին: Օրինակ՝ «Կաքավիկ» երգը ուսուցանելիս կարելի է մի քիչ ավելի ծավալուն ներկայացնել Կոմիտասի կյանքը: Այդպես աշակերտները կտեղեկանան մեր պատմության ամենամանուկ իրադարձություններին: Հայրենասիրական երգեր ունկնդրելիս կարելի է պատմել որևէ հերոսի սխրագործություններից, պատմական Հայաստանի մասին երգերով ծանոթացնել պատմական սահմանների հետ, քանի որ երգերաժշտությամբ ավելի հեշտ է ընկալվում յուրաքանչյուր մյուս, ու ամենակարևորը՝ չի մոռացվում:

Եվ այսպես, մինչ պատմություն, աշխարհագրություն, գրականություն առարկաներն իրենց դռները կբացեն աշակերտների դիմաց, երաժշտությունը ժամ առաջ տեղեկացնում է դրանց մասին:

Երգը, երաժշտությունը մեծ դեր ունեն ինչպես հանրակրթական դպրոցում, այնպես էլ առօրյա կյանքում: Երգով վառ են պահվում պատմության էջերը: Երգով ծանոթանում ենք տարբեր երկրների պատմությանը: Երգը խիզախություն է ներշնչում զինվորին, և պատահական չէ, որ մեր զինվորները բաճակ են գնում երգ ու պարով: Երգով մարտիկը քաջալերվում է, և մեկ անգամ չէ, որ մեր մարտիկները պատերազմի դաշտ են մտել երգելով:

Երգը մեղմացնում է ցավը: Երգը հիշեցնում է ցավը: Խոհարարը հաճախ երգելով է ճաշ պատրաստում, դրանից ծաշն ավելի համով է ստացվում: Մշակը երբ երգելով է սերմը ցանում, բերքն ավելի առատ է լինում: Երգով անգամ ամենասահարկու գազանին են ենթարկեցնում:

Եվ այսպես, երաժշտության դասերին ձևավորվում և դաստիարակվում է բարի, գեղեցիկ, խիզախ, հայրենասեր, բանիմաց, հայրենասեր և աշխարհաճանաչ, լայն մտահորիզոնով անհատ: Եվ ի վերջո գալիս ենք այն համոզման, որ «Երաժշտություն» առարկան այն հիմնական միջոցներից մեկն է, որը ձևավորում, դաստիարակում ու պահպանում է հայեցի մարդու:

Սուսաննա ԱՂԱՍՅԱԼ Մարտիկերի շրջանի Քոլարակի միջն. դպրոցի երաժշտության ուսուցչուհի



ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ԸՆՏՐՎԵՑ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԵՌՅԱԿԸ

ՀՀ մշակութային հիմնադրամի, «Անտա-րես» հրատարակչության, կրթության և գիտության ու մշակույթի նախարարությունների, ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության նախաձեռնությամբ ապրիլի 29-ին Շուշիում անցկացվեց Ընթերցման օլիմպիադայի համրապետական փուլը: Արդեն ութ տարի է՝ Հայաստանում անց է կացվում այս մրցույթը, որին Արցախյան այս տարի է միացել: Համրապետական փուլին մասնակցեց դպրոցական փուլում 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած 46 աշակերտ:

Մրցույթին մասնակցում են 6-րդ դասարանի աշակերտները, իսկ թե ինչու վեցերորդցիները, Ընթերցման համրապետական օլիմպիադայի տնօրեն, ՀՀ մշակութային հիմնադրամի տնօրեն Մանուկ Նիգոյանը պարզաբանեց, որ օլիմպիադան անցկացվում է ըստ գերմանական մոդելի, որտեղ նույնպես 6-րդ դասարանի սովորողներ են: Հետագոտությունները ցույց են տվել, որ դա այն տարիքն է, երբ աշակերտը հստակ կողմնորոշվում է՝ ինքն կոաչման, թե՛ չի դառնա ընթերցող:

Օլիմպիադան ունի գրավիչ պայմաններ: Եզրափակիչ փուլում հաղթող աշակերտը հնարավորություն է ստանում ծնողներից որևէ մեկի հետ յոթօրյա հանգստի մեկնել Հռոմ: Առաջին տարեկան տեղերը զբաղեցրած աշակերտներն իրենց ծնողների հետ՝ յոթօրյա ուղևորության: Հայաստանում ապրողները՝ Արցախ, արցախցիները՝ մայր Հայաստան: Առատ է նաև մրցանակային ֆոնդը: 1-ին տեղ զբաղեցրած աշակերտը ստանում է 600 հազ. դրամ, որը կարող է օգտագործել երկու եղանակով. մի դեպքում դպրոցն ավարտելուց հե-

տո փակել համալսարանի 1-ին կուրսի ուսման ծախսերը, մյուս դեպքում՝ վեց տարի շարունակ ամեն ուսումնական տարեկանի մրցանակային ֆոնդից հանել 100 հազ. դրամ՝ սեպտեմբերին ստանալով ծախսերը հոգալու համար: 2-րդ, 3-րդ և 4-րդ տեղերի համար ևս նախատեսված են ֆինանսական ֆոնդեր, համապատասխանաբար՝ 250 հազ., 150 հազ. և 100 հազ. դրամ: Կան և այլ մրցանակներ՝ հեռա-



խոսներ, պլանշետներ, էլեկտրոնային ընթերցիչներ, ամվճար ապահովագրում և այլն: «Այս ամենը արված է մի նպատակով. որ աշակերտները հասկանան, թե որքան կարևոր է գիրք կարդալը, որ ընթերցելը իսկապես հերոսություն է, և մենք առարկայացնում ենք այդ հերոսությունը: 21-րդ դարում ո՞ր աշակերտը կարող է իր ծնողին տանել Հռոմ 7-օրյա կամային, հոգալ իր սեպտեմբերին ստանալ ծախսերը կամ համալսարանական ուսման վարձավճարը. իհարկե՝ ընթերցող, ինտելեկտուալ

աշակերտը: Սրանով աշակերտը դառնում է հերոս դասարանում, դպրոցում, ընտանիքում, քաղաքում, համրապետությունում: Սա է նպատակը. հերոսացնել ընթերցող, ինտելեկտուալ աշակերտներին»,- ասաց Մ.Նիգոյանը:

Օլիմպիադան ընթանում է երկու փուլով. առաջին փուլում աշակերտն ընթերցում է իր բերած գրքից հատված: Գնահատվում են բաների ճիշտ շեշտադրումը, ընթերցման արտահայտչականությունը (բառում առկա հնչյունների հստակ արտաբերումը), աշակերտի կողմից գիրքն ամբողջությամբ կարդացած լինելը: Գլխավորն այստեղ ոչ թե դերասանական տաղանդն է, ծայրային տարբեր ելևէջումները, այլ սահուն, ճիշտ ընթերցելը: Երկրորդ փուլում աշակերտն ընթերցում է ժյուրիի կողմից տրված գրքից մի հատված: Դրանով հասկանալի է դառնում՝ աշակերտն ընթերցել է, թե՛ ուղղակի անգիր է արել իր ընտրած հատվածը ու դրանով լավ ներկայացել. «Երկրորդ փուլը, այսպես ասած, լակմուսի թուղթ է, որը շատ լավ ցուցիչ է՝ հասկանալու աշակերտի ընթերցողական հմտությունները»:

Երկու փուլերի միավորների համրագումարով որոշվում են այն երեք հոգին, որ պետք է մասնակցեն ՀՀ եզրափակիչ փուլին, որը տեղի կունենա մայիսի վերջին՝ Երևանում: Նույն օրը երկույն տեղի կունենա մրցանակաբաշխության հանդիսավոր արարողություն, որին ներկա կլինեն կազմակերպիչները, հովանավորները: Ընդհանուր առմամբ եզրափակիչ փուլին կմասնակցի 36 աշակերտ՝ ՀՀ բոլոր մարզերից, Արցախից և Երևանից երեքական լավագույն ընթերցող աշակերտները: Մ.Նիգոյանի

խոսքով՝ Երևանից ոչ մի աշակերտ առանց մրցանակի չի վերադառնա:

Նրանց լուսանկարները, որպես ընթերցանության հերոսներ, տեղ կգտնեն քաղաքների արտաքին գովազդային վահանակներին:

Եվ այսպես, Արցախից ահա այն երեք երջանիկները, որոնց բախտ է վիճակվել մեկնել Երևան՝ մասնակցելու Ընթերցման օլիմպիադայի եզրափակիչ փուլին. Անգելինա Պապիկյան (1-ին տեղ, Մարտակերտի հ. 2 հիմնական դպրոց), Մերի Սահակյան (Ստեփանակերտի հ.9 հիմնական դպրոց), Անահիտ Աբրահամյան (Քերծորի հ.1 միջնակարգ դպրոց):

Ընորհավորելով և հաջողություններ մաղթելով նրանց առաջիկա մրցույթում՝ Մ.Նիգոյանն ասաց. «Մյուսները պետք է հասկանան, որ իրենց չանցնելը պարտություն չէ, որովհետև գիրք կարդալն արդեն իսկ հաղթանակ է: Հետևաբար՝ բոլորը հաղթողներ եք»:

Մեր հարցին, թե ինչպես կբնութագրի մասնակցների ընթերցման մակարդակը, Մ.Նիգոյանը պատասխանեց.

- Աշակերտների մեծ մասը գիրքն ամբողջությամբ ընթերցած էր ներկայացել: Դա շատ լավ է: Բայց շատերն ընտրել էին հեքիաթները: 6-րդ դասարանի երեխան պետք է դուրս եկած լինի հեքիաթի հասակից: Նրան պետք է գրավի արկածային գրականությունը: Երկի ուսուցիչների թերությունն է, որ խորհուրդ են տվել հայ գրողներ ընթերցել և ոչ երբեք արտասահմանյան արկածային գրականություն, որն իրենց համար է այս տարիքի համար: 6-րդ դասարանի բառամթերքը լավագույնս ներառված է արկածային գրականության մեջ:

Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱՐՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՆՈՂ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՈՎ

Հաղթանակի օրվան նվիրված՝ ապրիլի 31-ից մայիսի 5-ը Ստավրոպոլի երկրամասի Սուվորովսկայա ավանում կայացած բռնցքամարտի միջազգային մրցաշարին մասնակցած արցախցի մարզիկները վերադարձան հաղթանակով: Մրցաշարին մասնակցում էր վեց երկիր ներկայացնող 350 մարզիկ բոլոր տարիքային խմբերում: Արցախի վեց հոգանոց թիմը մարզիչ Նարեկ Աբրահամյանի գլխավորությամբ հանդես եկավ առանձին կազմով:

Մայիսի 7-ին Ստեփանակերտի «Վիկինգ» մարզասահուն հանդիպում ունեցանք հաղթանակներով և մրցանակներով հայրենիք վերադարձած մարզիկների և մարզչի հետ: Նարեկ Աբրահամյանն Ասկերանի մարզադպրոցի բռնցքամարտի մարզիչ է: Մարզում է շուրջ 70 սան Ստեփանակերտում, Ասկերանում, Մարտակերտում: Արդեն երրորդ անգամ են նրա սաները մասնակցում միջազգային մրցաշարի և փայլուն դրսևորում իրենց: Այս մրցաշարին մասնակցած բոլոր մարզիկները 13-14 և 15-16 տարիքային կարգերում զբաղեցրել են մրցանակային տեղ և պարգևատրվել մեդալներով ու պատվոգրերով:

Երկի Առստամյանը (մինչև 36 կգ) երեք մարտ ունեցավ: Երեքում էլ հաղթելով՝ դարձավ չեմպիոն: Պարգևատրվեց նաև «Կամբ դեպի հաղթանակ» մրցանակով: Մանվել Պետրոսյանը (- 48կգ) երկու մարտում հաղթելով՝ հռչակվեց չեմպիոն: Պարգևատրվեց նաև «Լավագույն տեխնիկա» մրցանակով: Գոռ Բեգլարյանը (- 44,5 կգ) երեք մարտ ունեցավ, հաղթելով դրանցից երկուսում և արժանացավ երկրորդ տեղի: Արայիկ Պետրոսյանը (- 48 կգ) երկու մարտից մեկում հաղթելով՝ արժանացավ երկրորդ տեղի: Աշոտ Բեգլարյանը (- 54 կգ) երկու մարտից մեկում հաղթելով՝ զբաղեցրեց երրորդ տեղ: Ալեքս Հայրապետյանը (- 57 կգ) նույնպես երկու մարտից մեկում հաղթելով՝ գրավեց երրորդ տեղ:

Մրցաշարին մասնակցող մարզիկները ներկայացնում էին ՌԴ-ն, Հունաստանը, Հարավային Օսիան, Հայաստանը, Արցախի Հանրապետությունը, Ադրբեյջանը: Չնայած ադրբեյջանցիների բողոքարկումներին, արցախցի մարզիկները հանդես եկան մեր համրապետության անվան և դրոշի ներքո: Մարզիչ Ն.Աբրահամյանը մեկնաբանեց այսպես. «Ադրբեյջանը մրցաշարին ներկայացել էր 40 հոգանոց կազմով: Նախքան մրցաշարն սկսվելը նրանց մոտ նկատվում էր դրոշակի իրարանցում, որ դժգոհ են կազմակերպիչներից՝ մեզ մեր համրապետության անվան տակ հանդես գալը թույլատրելու համար: Ես մոտե-

ցա նրանց հավաքականի ավագ մարզչին եւ գրույց ունեցա հետը: Հայտնեցի, որ հայրս Ազատամարտի մասնակից է, ինքս մասնակցել եմ ապրիլյանին, բայց այստեղ ես եկել եմ իմ գործը ցույց տալու, բերել եմ մարզիկներս, որ-



պետի մասնակցեն մրցաշարին, թող հաղթեն ուժեղները: Մրցաշարի կազմակերպիչները բողոքարկումը չընդունեցին, և մենք հանդես եկանք մեր դրոշի ներքո: Մեր մարզիկ Աշոտ

Բեգլարյանը ռիմգում հանդիպեց Ադրբեյջանը ներկայացնող մարզիկ Շախրամ Ալիեվին եւ հաղթեց նրան: Մեր թիմի մարզիկներից ադրբեյջանցուց պարտություն կրող չի եղել»:

Նարեկ Աբրահամյանը գոհ է սաների արդյունքներից: Նրա գնահատմամբ՝ մարզիկները ցույց տվին բարձր մարզական մակարդակ: «Բռնցքամարտի գարագանան համար սուղ պայմաններում, երբ չկան բռնցքամարտի մասնագիտացված ակումբներ, մրցաշարերին պետք է վաճառվի համախառն մասնակցել, մեր սաները դրսևորում են լավագույն արդյունք: Մենք պետք է վաճառվենք շատ հավատարմաբար ու վստահեմք մեր ուժերին: Ուզում են շնորհակալություն հայտնել ԱՀ ԿԳՍ փոխնախարար Աշոտ Դանիելյանին՝ մեր աշխատանքին ճիշտ գնահատական տալու համար»,- ասաց նա:

Բռնցքամարտն օլիմպիական մարզաձև է: Մարզի խոսքով՝ չի բացառվում, որ մի օր էլ Արցախի Հանրապետությունը ներկայացնող բռնցքամարտիկները օլիմպիական մեդալ կբերեն:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԴԵՊԻ ՄԵՑ ՍՊՈՐՏ ՃԱՆԱՊԱՐԿԸ

15 մեր օրերում, երբ անգամ դպրոցներում ճրագով են փնտրում տղամարդ ուսուցչի, մանկապարտեզում տղամարդ դաստիարակ կա: Արթուր Հովսեփյանը այդ եզակիներից է: Ավարտել է ԱրՊՀ ֆիզկուլտուրայի բաժինը՝ թեթև աթլետիկա մասնագիտացմամբ: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել մանկապարտեզում (արդեն վեց տարի է): Մրցույթի վարժությունների միջև դադարին նա, ինչպես մեծ սպորտային պայքարում, թիմի յուրաքանչյուր անդամի բացատրում էր ինչն ինչպես անել, օրինակ էր ցույց տալիս, իսկ երեխաներն ուշադիր



լուսն էին, կրկնում նրա շարժումները: Մրցումից հետո մեր խնդրանքով նա հակիրճ ներկայացրեց, թե ինչու է որոշել աշխատել մանկապարտեզում: «Մեծ հաճույք է փոքրիկների հետ աշխատելը: Ամենակարևոր պայմանը երեխաներին սիրելն է ու նրանց կողմից սիրվելը: Երբ փոխադարձ սերն առկա է, դրանից հաճելի բան չկա, մասնավոր նրանց հետ ինքը էլ մանկանում ես: Երեխաների համար սպորտը ամենասիրած առարկան է, բայց պետք է լինի նաև քո կողմից պարտականության կատարման խոր գիտակցում և տնօրինության աջակցություն»,- ասաց նա՝ հավելելով, որ տղամարդու համար բոլորովին

ամոթ չէ մանկապարտեզում աշխատելը: Եվ երիտասարդ տղաներին կոչ արեց համալրել շարքերը:

Ինչ մնում է նախադպրոցականների միջև այդպիսի մրցումներ անցկացնելուն, նա խիստ կարևորեց այդ երևույթը՝ ասելով, որ դա կխթանի երեխաների՝ փոքրուց սպորտի նկատմամբ սեր ունենալուն, հետևաբար և, առողջ ապրելակերպին:

Ստեփանակերտի հ.1 դպրոցի թիմն առաջիկայում Արցախը կներկայացնի Երևանում կայանալիք «Լավագույն նախադպրոցական մարզական հիմնարկ» մրցույթի եզրափակիչ փուլին: Հաջողություն մեր թիմին:

Ս. ԽԱԶՄՏՅԱՆ

<p><b>ՀԱՅԱՍՏԱՆ</b></p> <p>ԽՄԲԱԳԻՐ</p> <p>Ս. ԽԱԶՄՏՅԱՆ</p>	<p>Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ</p> <p>Մտեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info</p>	<p>Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:</p>	<p>Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3000: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 10.05.2019թ.:</p>
--	---	---	--

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: